

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ.....	2
Ծանոթագրություն.....	3
Միջազգային փորձ եվ միջազգային ստանդարտներ.....	4
Ա) ՏՀԶԿ ստանդարտներ.....	4
Բ) ԵՄ ստանդարտներ.....	5
Գ) Միջազգային պրակտիկա.....	14
Ազգային օրենսդրության եվ պրակտիկայի վերլուծություն.....	22
Ա) Ազդարարման տեսակները (channels) եվ դրանց իրավական կարգավորումները.....	22
Ազդարարումը ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով.....	31
Բ) Ազդարարման տեսակների կիրառման պրակտիկան.....	35
Եզրակացություն.....	39
Ա) Ազդարարման տեսակների վերաբերյալ ընդհանուր եզրակացություններ.....	39
Բ) Ներքին ազդարարման վերաբերյալ եզրակացություններ.....	40
Գ) Արտաքին ազդարարման վերաբերյալ եզրակացություններ.....	42
Դ) Հանրությանն ազդարարման վերաբերյալ եզրակացություններ.....	42
Առաջարկություններ.....	44
Ա) Ազդարարման տեսակների վերաբերյալ ընդհանուր բնույթի առաջարկություններ.....	44
Բ) Ներքին ազդարարման վերաբերյալ.....	45
Գ) Արտաքին ազդարարման վերաբերյալ.....	46
Դ) Հանրությանն ազդարարման վերաբերյալ.....	47

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ԱԺ Ազգային ժողով
- ԱԳ Արևելյան գործընկերություն
- ԵՄ Եվրոպական միություն
- ԶԼՍ Զանգվածային լրատվության միջոց
- ԿԿՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
- ՀՀ Հայաստանի Հանրապետություն
- ՄԻՊ Մարդու իրավունքների պաշտպան
- ՏԻՍ Տեղական ինքնակառավարման մարմիններ
- ՏՀԶԿ Տնտեսական համագործակցության և զարգացման
կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի
երկրների հակակոռուպցիոն ցանց

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն վերլուծության շրջանակներում արտաքին և հանրությանն ազդարարումների մասով կատարված վերլուծությունները վերաբերում են ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր ոլորտի վերաբերյալ ներկայացված հաղորդումների (ազդարարների) ընթացակարգերին: Իսկ ներքին ազդարարման վերաբերյալ վերլուծությունը ներառում է միայն հանրային ոլորտի վերաբերյալ ներկայացված հաղորդումների ընթացակարգերը: Մասնավոր ոլորտի ներքին ազդարարումը ներկայացված է Մասնավոր ոլորտում ազդարարման համակարգի կատարելագործում» փորձագիտական վերլուծության շրջանակներում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Միջազգային պրակտիկայում ազդարարման տեսակները և դրանց առանձնացումը գրեթե ունի նույն պատկերը, սակայն դրանք միմյանցից տարբերվում են կառուցակարգերի, գործիքների և կիրառման տեսանկյունից: Այս կապակցությամբ, ստորև ամփոփվում են ազդարարման տեսակների միջազգային պրակտիկան և ստանդարտները, որոնք փորձարկված են ժամանակի ու պրակտիկայի ընթացքում, և կարող են ուսուցանելի ու կիրառելի լինել այլ երկրների կողմից: Դրանցից հատկապես ուշադրության են արժանի Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի կողմից (այսուհետ՝ ՏՀԶԿ) և Եվրոպական Միության (այսուհետ՝ ԵՄ) կողմից սահմանված ստանդարտները:

Արևելյան գործընկերության (ԱԷԳ) փորձը ազդարարման տեսակների և դրանց կատարելագործման մասով ևս ուսումնասիրվել է: Որպես ԱԷԳ երկիր առանձնացվել է Ուկրաինայի փորձը, որը ըստ էության բխում է ՏՀԶԿ ստանդարտներից¹:

Այսպես.

Ա) ՏՀԶԿ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի գնահատման շրջանակի «Ազդարարման ոլորտի» թիվ 1 ինդիկատորի՝ «Ազդարարների պաշտպանությունը երաշխավորված է օրենքով» 1.2-ի (A), (B) և (C) հենանիշերը սահմանում են հետևյալ պահանջները. «1.2. Ազդարարների մասին օրենսդրությունը տարածվում է հետևյալ անձանց վրա, որոնք հայտնում են իրենց աշխատավայրում կոռուպցիայի հետ կապված ոչ իրավաչափ գործողությունների մասին (A) Հանրային հատվածի աշխատակիցներ, (B) Մասնավոր հատվածի աշխատողներ, (C) Պետության մասնակցությամբ ձեռնարկությունների խորհրդի անդամներ և աշխատողներ»²:

¹ ՏՀԶԿ (2022) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության մոնիթորինգի 5-րդ փուլի պիլոտային զեկույց. Հակակոռուպցիոն բարեփոխումներ Ուկրաինայում: Հասանելի է՝ <https://www.oecd-ilibrary.org/docserver/b1901b8c-en.pdf?expires=1697202384&id=id&accname=guest&checksum=984354AD1D6CF0967634994B8BFC6385>

² ՏՀԶԿ (2023), Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր, մոնիթորինգի 5-ի փուլ: Գնահատման շրջանակ: Էջեր 35-36, հասանելի է՝ <https://www.oecd.org/investment/anti-bribery/corruption/acn/Istanbul-Anti-Corruption-Action-Plan-5th-Round-Monitoring-Assessment-Framework-ENG.pdf>

Իր հերթին, ազդարարների մասին օրենսդրությունը նշանակում է բոլոր իրավական դրույթները, որոնք սահմանում են ազդարարումը, ազդարարման ընթացակարգերը և ազդարարներին տրամադրվող պաշտպանությունը³:

«Ազդարարման ոլորտի» թիվ 2 ինդիկատորի՝ «Ներդրված են ազդարարների պաշտպանության ապահովմանն ուղղված արդյունավետ մեխանիզմներ, որոնք կիրառվում են գործնականում» 2.1-ի (A), (B), (C) և (D) հենանիշերը սահմանում են հետևյալ պահանջները. «2.1 Հաղորդում ներկայացնելու հետևյալ ընթացակարգերը նախատեսված են օրենքով և գործում են պրակտիկայում՝ (A) Ներքին ազդարարման ընթացակարգ՝ հանրային հատվածի և պետական մասնակցությամբ ձեռնարկությունների աշխատավայրերում, (B) Արտաքին ազդարարման ընթացակարգ (հաղորդումը ներկայացվում է մասնագիտացված, կարգավորող, իրավապահ կամ համապատասխան այլ պետական մարմնի), (C) Հանրությանը ազդարարելու հնարավորություն (լրատվամիջոցների կամ ինքնուրույն բացահայտման միջոցով, օրինակ՝ սոցիալական ցանցերում), (D) Օրենքը նախատեսում է ազդարարների ընտրության հնարավորություն՝ հաղորդումը ներքին կամ արտաքին ընթացակարգով ներկայացնելու վերաբերյալ⁴:

Թիվ 2 ինդիկատորի՝ 2.2-ը սահմանում է՝ «Գործում է հաղորդումների ներկայացման կենտրոնական էլեկտրոնային հարթակ, որը կիրառվում է գործնականում»: Իսկ 2.3-ը ինդիկատորի (A) և (B) հենանիշերը նախատեսում են հետևյալ պահանջները. «2.3. Անանուն ազդարարումներ՝ (A) Կարող է քննության առնվել, (B) Անանուն եղանակով հաղորդում ներկայացրած ազդարարները կարող են ստանալ պաշտպանության միջոցներ, երբ նրանց անձը բացահայտվի⁵»:

Բ) ԵՄ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

2019 թվականի հոկտեմբերի 23-ին ԵՄ խորհրդարանն ընդունել է No 2019/1937 հրահանգը, որը սահմանում է ԵՄ-ի իրավունքի խախտումների մասին հաղորդում ներկայացրած անձանց պաշտպանության չափորոշիչներ⁶: Վերջինիս համաձայն՝ անդամ պետություններից պահանջվում է

³ ՏՀԶԿ (2023), Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր. Ուղեցույց: Էջ 44, հասանելի է՝ <https://www.oecd.org/corruption/anti-bribery/corruption/acn/Istanbul-Anti-Corruption-Action-Plan-5th-Round-Monitoring-Guide-ENG.pdf>

⁴ ՏՀԶԿ (2023), Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր, մոնիթորինգի 5-ի փուլ: Գնահատման շրջանակ: Էջ 36:

⁵ ՏՀԶԿ (2023), Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր, մոնիթորինգի 5-ի փուլ: Գնահատման շրջանակ: Էջ 36:

⁶ Եվրոպական միության գրասենյակ: Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2019 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ (EU) 2019/1937 Հրահանգ՝ ԵՄ-ի իրավունքի խախտումների մասին հաղորդում ներկայացրած անձանց պաշտպանության չափորոշիչների մասին: Հասանելի է՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32019L1937>

Եվրոպական հանձնաժողովին տրամադրել հիշյալ հրահանգի իրականացման և կիրառման վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: Ըստ հրահանգի՝ նախատեսված է **ազդարարման երեք տեսակ՝ ներքին, արտաքին և հանրությանը**: Ստորև ներկայացվում է այս տեսակների վերաբերյալ հրահանգի կարևոր ստանդարտները և ուղենիշները:

Ա) ՆԵՐՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄԸ

Համաձայն հրահանգի՝ այն անձինք, որոնք աշխատում են պետական կամ մասնավոր կազմակերպությունում կամ իրենց աշխատանքի և գործունեության բնույթից էլնելով այդպիսի կազմակերպության հետ գտնվում են հարաբերությունների մեջ, հաճախ առաջինն են իմանում այդ համատեքստում ծագող սպառնալիքների կամ հանրային շահերին ուղղված վնասների մասին: Հաղորդելով միության օրենսդրության այն խախտումների մասին, որոնք կարող են վնաս հասցնել հանրային շահին, այդ անձինք հանդես են գալիս որպես «ազդարարներ» և դրանով իսկ կարևոր դեր են խաղում նման խախտումները բացահայտելու, կանխելու և հասարակության բարեկեցությունը ապահովելու հարցում: Այնուամենայնիվ, պոտենցիալ ազդարարներին հաճախ չեն հայտնում իրենց մտահոգությունները կամ կասկածները՝ վախենալով վնասակար գործողություններից: Այս համատեքստում, ազդարարների հավասարակշռված և արդյունավետ պաշտպանության ապահովման կարևորությունը գնալով ավելի է ընդունվում ինչպես միության, այնպես էլ միջազգային մակարդակում:

Հաղորդում ներկայացնող անձինք սովորաբար ավելի հակված են իրականացնել ներքին ազդարարում, եթե արտաքին ազդարարում կատարելու պատճառ չունեն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ազդարարների մեծամասնությունը հակված է ներքին ազդարարումներ ներկայացնել այն կազմակերպության ներսում, որտեղ նրանք աշխատում են: Հիշյալի ապահովման համար հրահանգը նախատեսում է մի քանի կարևոր կարգավորումներ, որոնք ներկայացված են ստորև:

Ըստ հրահանգի՝ (47) ԵՄ օրենսդրության խախտումների դեպքերը արդյունավետ հայտնաբերելու և կանխարգելելու համար կենսական նշանակություն ունի, որպեսզի համապատասխան տեղեկատվությունը օպերատիվ կերպով հասնի խնդրի աղբյուրին մոտ գտնվող անձանց, որոնք կարող են հետաքննել և, հնարավորության դեպքում, վերացնել այն: Հետևաբար, որպես սկզբունք, հաղորդում ներկայացնող անձանց պետք է խրախուսել նախ՝ օգտագործեն ներքին ազդարարման ընթացակարգը և հաղորդումը ներկայացնեն իրենց գործատուին, եթե այդպիսի ընթացակարգերը հասանելի են նրանց և անձը ողջամտորեն ակնկալում է, որ դրանք պրակտիկայում «աշխատող» ընթացակարգեր են: Մա, մասնավորապես, վերաբերում է այն դեպքերին, երբ հաղորդում ներկայացնող անձը վստահ է, որ խախտումը կարող է արդյունավետորեն

լուծվել համապատասխան կազմակերպության ներսում, և որ իր նկատմամբ վնասակար գործողության վտանգ չկա:

Հրահանգի 5-րդ հոդվածը, որտեղ սահմանված են փաստաթղթի հիմնական հասկացությունը, նշում է՝ *«ներքին ազդարարումը նշանակում է հանրային և մասնավոր սեկտորի ոլորտներում իրավաբանական անձի վերաբերյալ տեղեկատվության գրավոր և բանավոր հաղորդակցություն»*: 2-րդ բաժինը նվիրված է ներքին ազդարարմանը: Ըստ այդմ՝ որպես ընդհանուր սկզբունք, խախտումների մասին տեղեկատվությունը կարող է հաղորդվել ներքին ազդարարման ընթացակարգերի և եղանակների միջոցով, եթե դրանք չեն դիտարկվում որպես արտաքին կամ հանրությանն ազդարարում: Անդամ պետությունները պետք է խրախուսեն նախքան արտաքին ազդարարման ընթացակարգերով հաղորդում ներկայացնելը, դրանք ներկայացվեն ներքին ընթացակարգերով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ խախտումը կարող է առավել արագ և արդյունավետ կերպով լուծվել հենց ներքին կարգով: Սակայն այս դեպքում, կարևոր է որ հաղորդում ներկայացնող անձը վստահ լինի, որ չի ենթարկվի վնասակար գործողությունների: Հետևապես կարևոր է, որ ներքին ազդարարման ընթացակարգերի օգտագործման վերաբերյալ տրամադրվի անհրաժեշտ և ամբողջական տեղեկատվությունը՝ կազմակերպության և մարմինների ներսում:

Հրահանգի շրջանակներում կարևոր տեղ է հատկացվել ներքին ընթացակարգերի ստեղծման պարտավորությանը՝ ԵՄ անդամ երկրների համար: Ըստ այդմ՝ անդամ պետությունները ապահովում են, որ մասնավոր և պետական հատվածի կառույցները ներդնեն ներքին ազդարարման և կապի ապահովման ընթացակարգեր և գործիքներ: Այս կանոնը տարածվում է նաև պետական հատվածի բոլոր իրավաբանական անձանց վրա, այսինքն՝ պետության մասնակցությամբ ստեղծված իրավաբանական անձանց վրա: Ինչ վերաբերում է համայնքներին, ապա ըստ ստանդարտի՝ եթե համայնքի բնակչության թիվը պակաս է քան 10 000 -ը, ապա այս համայնքները կարող են ազատվել ներքին ազդարարման ընթացակարգեր ներդնելու պարտավորությունից:

Վերադառնալով ներքին ազդարարման ընթացակարգերին և գործիքներին, ապա դրանք պետք է հնարավորություն ընձեռեն աշխատողներին հաղորդել խախտումների մասին տեղեկություններ: Ընդ որում, այս հնարավորությունը պետք է տրամադրվի նաև այն անձանց, որոնք այդ կառույցի հետ գտնվում են ոչ միայն աշխատանքային, այլև՝ ծառայողական կամ այլ բնույթի հարաբերությունների մեջ, ինչպես օրինակ՝ վարչական, ղեկավարման կամ կառավարման (վերահսկողական) մարմիններում պաշտոն զբաղեցնող անձինք, ծառայություններ մատուցող անձինք, մատակարարները և այլն: Այս անձանց ցանկը նշված է Հրահանգի 4(1) հոդվածի (բ), (գ) և (դ) կետերում և 4(2) հոդվածում: Ի դեպ, ըստ Հրահանգի՝ եթե խոսքը գնում է մասնավոր ոլորտի կազմակերպությունների մասին, ապա այս պարտավորությունը վերաբերում է այն կառույցներին, որտեղ աշխատողների թիվը 50 և ավելի է: Այս կանոնից բացառություն են կազմում այն կազմակերպությունները, որոնց գործունեության բնույթը գնահատվում է որպես բարձր ռիսկայնություն ունեցող, ու թեև աշխատողների թիվը ցածր է քան 50-ը, միևնույն է ներքին

ազդարարման ընթացակարգեր պետք է ներդնել: Այս ընկերությունների շարքին են դասվում, օրինակ՝ հանրային առողջության կամ բնապահպանական ոլորտներում աշխատող մասնավոր ընկերությունները:

Ազդարարման ընթացակարգերը կարող են ապահովվել **ներքին ազդարարման համակարգով** այն **անձանց** կամ ստորաբաժանման կողմից, որոնք **նշանակված են հենց այդ նպատակով** կամ տրամադրվել են արտաքին աղբյուրից՝ **երրորդ անձանց կողմից**: Երրորդ կողմերը ևս կարող են իրավասու լինել մասնավոր և պետական հատվածի իրավաբանական անձանց անունից ստանալ խախտումների մասին ազդարարումներ՝ պայմանով, որ վերջիններս կապահովեն անկախության, գաղտնիության և տվյալների պաշտպանության համապատասխան երաշխիքներ: Որպես նման երրորդ կողմ կարող են հանդես գալ արտաքին ազդարարման հարթակներ գործարկող կառույցները (օրինակ՝ մասնագիտացված հասարակական կազմակերպություններ, գործարար կազմակերպություններ), արտաքին խորհրդատուները, աուդիտորները, արհմիությունների ներկայացուցիչներ, աշխատողների ներկայացուցիչներ և այլն⁷:

Հրահանգի իմաստով՝ ներքին ազդարարման և կապի ընթացակարգերը ներառում են հետևյալները.

- a) հաղորդումների ստացման ընթացակարգեր, որոնք մշակվել, հաստատվել և գործարկվում են անվտանգ եղանակներով, և որոնք երաշխավորում են հաղորդում ներկայացնող անձի և հաղորդման մեջ նշված ցանկացած երրորդ կողմի ինքնության գաղտնիության պաշտպանվածությունը, ինչպես նաև բացառում են դրանց հասանելիությունը մարմնի անձնակազմի այն անդամներին, որոնք լիազորված չեն.
- b) հաղորդումը ստանալու մասին ծանուցում՝ հաղորդում ներկայացրած անձին՝ հաղորդումը ստանալու պահից յոթօրյա ժամկետում.
- c) անաչառ անձի կամ ստորաբաժանման նշանակում, որը իրավասու է ապահովել հաղորդումների ընթացքը: Այս դերում կարող է հանդես գալ այն նույն անձը կամ ստորաբաժանումը, որը ստանում է հաղորդումները և որը կապահովի հաղորդում ներկայացրած անձի հետ կապը, և անհրաժեշտության դեպքում, նրան կղիմի լրացուցիչ տեղեկատվություն լրացուցիչ տեղեկատվության համար, ինչպես նաև կապահովի հաղորդում ներկայացրած անձի հետ հետադարձ կապը.
- d) (c) պարբերությունում նշված նշանակված անձի կամ ստորաբաժանման կողմից մանրակրկիտ մոնիտորինգի իրականացում՝ ներքին ազդարարման ընթացակարգերով ներկայացված հաղորդումների ընթացքը.

⁷ Եվրոպական միության գրասենյակ: Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2019 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ (EU) 2019/1937 Հրահանգ՝ ԵՄ-ի իրավունքի խախտումների մասին հաղորդում ներկայացրած անձանց պաշտպանության չափորոշիչների մասին: Կետ 54:

- e) անանուն հաղորդման վերաբերյալ մանրակրկիտ մոնիտորինգի իրականացում, եթե անանուն հաղորդման ընթացակարգը նախատեսված է ազգային օրենսդրությամբ.
- f) ողջամիտ ժամկետի սահմանում՝ հետադարձ կապի ապահովման համար: Այս ժամկետը պետք է լինի ոչ ուշ, քան հաղորդումը ստանալու մասին ծանուցումը ներկայացնելուց երեք ամիս հետո, իսկ եթե հաղորդում ներկայացնող անձին չի ուղարկվել ծանուցում, ապա այդ հաղորդումը ստանալուց հետո յոթնօրյա ժամկետի ավարտից հաշված երեք ամիս.
- g) իրավասու մարմիններին և, անհրաժեշտության դեպքում, Միության կազմակերպություններին, մարմիններին, գրասենյակներին կամ գործակալություններին արտաքին ազդարարում ներկայացնելու ընթացակարգերի վերաբերյալ հանրամատչելի տեղեկատվության տրամադրում:

Վերը նշված (a) կետով նախատեսված ընթացակարգերը պետք է հնարավորություն ընձեռեն հաղորդումը ներկայացնել **գրավոր, բանավոր, կամ՝ երկու ձևով: Բանավոր** հաղորդման դեպքում, պետք է հնարավորություն լինի այն իրականացնել **հեռախոսով** (telephone) կամ **ձայնային հաղորդակցության այլ համակարգերով** (other voice messaging systems), ինչպես նաև հաղորդում ներկայացնող անձի պահանջով՝ ողջամիտ ժամկետում **առկա (դեմատղեմ) հանդիպման** (physical meeting) միջոցով:

Բ) ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄԸ

Ըստ հրահանգի՝ հաղորդում ներկայացնող անձինք խախտումների մասին պետք է հաղորդումը ներկայացնում են արտաքին ազդարարման ընթացակարգերով հետևյալ երկու դեպքում՝

1. եթե խախտման վերաբերյալ տեղեկատվությունը նախ ներկայացրել են ներքին ազդարարման ընթացակարգով, կամ
2. անմիջապես ներկայացում են հաղորդում՝ արտաքին ազդարարման ընթացակարգով:

Ազդարարման այս տեսակի համար նույնպես Հրահանգի շրջանակներում կարևոր տեղ է հատկացվել արտաքին ազդարարման և կապի հաստատման (հաղորդման հաշվառման) ընթացակարգերի ստեղծման պարտավորությանը՝ ԵՄ անդամ երկրների համար: Ըստ այդմ՝ արտաքին ազդարարման ընթացակարգեր մշակելու և այդ ազդարարումներին հետևելու համար անդամ պետությունները ունեն հետևյալ հանձնառությունները.

1. անդամ պետությունները պետք է նշանակեն իրավասու մարմիններ, որոնք կստանան և կարձագանքեն հաղորդումներին, ինչպես նաև կապահովեն դրանց ընթացքը: Այս կապակցությամբ, այդ մարմիններին պետք է տրամադրել համապատասխան ռեսուրսներ,
2. անդամ պետություններն ապահովում են իրավասու մարմինների կողմից հետևյալ գործառնությունների իրականացումը.
 - a) ստեղծել անկախ և ինքնավար արտաքին ազդարարման ընթացակարգեր՝ խախտումների վերաբերյալ տեղեկատվության ստացման և մշակման համար,
 - b) անհապաղ, և ոչ ուշ քան հաղորդումը ստանալու պահից յոթօրյա ժամկետում, ծանուցել այդ հաղորդումը ստանալու մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ հաղորդում ներկայացրած անձը իրավասու մարմինն ուղղակի կերպով խնդրում է չծանուցել իրեն կամ իրավասու մարմինը հիմնավոր պատճառների ունի ենթադրելու, որ հաղորդման ստացման մասին ծանուցումը կվտանգի հաղորդում ներկայացրած անձի ինքնության պաշտպանությունը,
 - c) մանրակրկիտ կերպով հետևել հաղորդումների ընթացքին,
 - d) ողջամիտ ժամկետում, որը չպետք է գերազանցի հաղորդման ստանալու հաստատման պահից երեք ամիսը, կամ պատշաճ պատճառաբանված որոշման դեպքում՝ վեց ամիսը, տրամադրել հետադարձ կապ հաղորդման ընթացքի վերաբերյալ,
 - e) հաղորդում ներկայացրած անձին տեղեկացնել հաղորդման արդյունքում իրականացված հետաքննության վերջնական արդյունքի մասին՝ ազգային օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերին համապատասխան.
 - f) պատշաճ ժամկետներում հաղորդմամբ ներկայացրած տեղեկատվությունը փոխանցել Միության իրավասու կազմակերպություններին, մարմիններին, գրասենյակներին կամ գործակալություններին, անհրաժեշտության դեպքում հետաքննության իրականացման նպատակով՝ Միության կամ ազգային օրենսդրությանը համապատասխան,
3. Անդամ պետությունները կարող են նախատեսել դեպքեր, երբ իրավասու մարմինները հաղորդումը պատշաճ կերպով գնահատելուց հետո որոշում է, որ հաղորդմամբ ներկայացրած տեղեկությունները կամ ենթադրյալ խախտումները ունեն նվազ նշանակություն, և չկա անհրաժեշտություն սույն Հրահանգով

նախատեսված կարգով ապահովել այդ հաղորդման ընթացքը: Միաժամանակ, այս կարգավորումը չպետք է ազդեցություն ունենա այլ հանձնառությունների (պարտավորությունների) կամ այլ կիրառելի ընթացակարգերի վրա, որոնք ուղղված են սույն Հրահանգով սահմանված կարգով հաղորդման հաշվառման ու ձևակերպմանը, կամ ներքին ու արտաքին հաղորդում ներկայացրած ազդարարների պաշտպանությանը:

4. Անդամ պետությունները կարող են իրավասու մարմիններին վերապահել իրավասություն՝ որոշել չապահովել այն հաղորդումների (կրկնվող հաղորդումներ) ընթացքը, որոնք նախկինում հաշվառվել են և քննվել, և նոր հաղորդումը նախորդ հաղորդման հետ համեմատած չի պարունակում նոր կամ արժեքավոր տեղեկատվություն, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են նոր իրավական կամ փաստական հանգամանքներ, որոնք պահանջում են ապահովել նոր (կրկնվող) հաղորդման ընթացքը: Նման դեպքում, իրավասու մարմինները հաղորդում ներկայացրած անձին տեղեկացնում են իրենց որոշման և դրա հիմքերի մասին:
5. Անդամ պետությունները կարող են իրավասու մարմիններին վերապահել իրավասություն, հաղորդումների մեծ հոսքի դեպքում, դրանք լուծել ըստ առաջնահերթության. որպես առաջային քննել ծանր խախտումների կամ էական դրույթների խախտման վերաբերյալ հաղորդումները՝ ապահովելով վերը նշված (d) կետում սահմանված ժամկետները:
6. Անդամ պետությունները ապահովում են, են, որ ցանկացած մարմին, որը ստացել է հաղորդումը, սակայն այն գտնվում է իր իրավասության շրջանակներից դուրս, ողջամիտ ժամկետում և անվտանգ եղանակով վերահասցեագրում է այն ըստ ենթակայության՝ այդ մասին ծանուցելով հաղորդում ներկայացրած անձին:

Ի լրումն վերոգրյալի՝ Հրահանգը նախատեսում է նաև արտաքին ազդարարման ընթացակարգերի մշակման ստանդարտները: Դրանց համաձայն՝ արտաքին ազդարարումը համարվում են անկախ և ինքնավար, եթե դրանք համապատասխանում են հետևյալ բոլոր չափանիշներին.

- a) մշակվել, հաստատվել և գործարկվում են անվտանգ եղանակներով՝ երաշխավորելով ազդարարի և հաղորդման շրջանակներում նշված ցանկացած երրորդ կողմի ինքնության գաղտնիության պաշտպանություն, և բացառում են դրանց հասանելիությունը մարմնի անձնակազմի այն անդամներին, որոնք լիազորված չեն,
- b) հնարավորություն են տալիս երկրաբաժամկետ կտրվածքով պահպանել անհրաժեշտ տեղեկատվությունը՝ նպաստելով հետագա հետաքննությունների իրականացմանը:

Արտաքին ազդարարման ընթացակարգերը պետք է հնարավորություն ընձեռեն ազդարարել **գրավոր, քանավոր կամ երկու ձևով էլ: Բանավոր** հաղորդման դեպքում, պետք է հնարավորություն լինի այն իրականացնել **հեռախոսով** (telephone) կամ **ձայնային հաղորդակցության այլ համակարգերով** (other voice messaging systems), ինչպես նաև հաղորդում ներկայացնող անձի պահանջով՝ ողջամիտ ժամկետում **առկա (դեմատղեմ) հանդիպման** (physical meeting) միջոցով:

Կարևոր ստանդարտներից է հանդիսանում այն դրույթը, ըստ որի իրավասու մարմինները երաշխավորում են, որ այն դեպքում, երբ հաղորդումները ստացվում են վերը նշված ընթացակարգերով (**գրավոր, քանավոր կամ երկու ձևով էլ**) կամ անձնակազմի այն անդամների կողմից, որոնք **պատասխանատու չեն հաղորդումների հաշվառման համար**, վերջիններս **չեն քացահայտի** որևէ տեղեկատվություն, որը կարող է վերաբերվել հաղորդում ներկայացրած անձի կամ շահագրգիռ անձանց ինքնությանը, և հաղորդումը ժամանակին և առանց փոփոխության **կվերահասցեագրեն** իրավասու անձանց՝ հաշվառելու նպատակով:

Բացի այդ, անդամ պետությունները ապահովում են իրավասու մարմինների կողմից անձնակազմի անդամների նշանակում, որոնք պատասխանատու կլինեն հաղորդումների հաշվառման համար, մասնավորապես.

- a) ցանկացած շահագրգիռ անձի **տրամադրել տեղեկատվություն** հաղորդում ներկայացնելու ընթացակարգերի վերաբերյալ,
- b) **ընդունել և մշտադիտարկել** հաղորդումները,
- c) հաղորդում ներկայացրած անձանց **ապահովել** հետադարձ կապ և, անհրաժեշտության դեպքում, **տրամադրել** լրացուցիչ տեղեկություններ:

Ընդ որում, նշված անձնակազմի անդամները պետք է **հատուկ վերապատրաստում** անցնեն **նախքան** հաղորդումների **հաշվառում** իրականացնելը:

Ըստ Հրահանգի՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ իրավասու մարմիններն իրենց կայքերում առանձնացված և հեշտ հասանելի բաժնում հրապարակեն նվազագույնը հետևյալ տեղեկատվությունը.

- a) Հրահանգի համաձայն **պաշտպանության** ստանալու համար **անհրաժեշտ պայմանները**,
- b) արտաքին ազդարարումների դեպքում կոնտակտային տվյալները, ներառյալ՝ **էլեկտրոնային և փոստային հասցեները, հեռախոսահամարները՝** նշելով, թե **արդյոք հեռախոսային խոսակցությունները ձայնագրվում են**,
- c) խախտումների վերաբերյալ հաղորդումների հաշվառման համար **կիրառելի ընթացակարգերը**, այդ թվում նշելով, թե իրավասու մարմինը ինչպե՞ս և ի՞նչ տեսակի տեղեկատվություն կարող է պահանջել հաղորդում ներկայացրած անձից, ներառյալ՝ հաղորդած տեղեկատվության վերաբերյալ **պարզաբանումների և լրացուցիչ**

տեղեկատվության տրամադրման անհրաժեշտությունը, հետադարձ կապի ապահովման ժամկետը, եղանակը և բովանդակությունը,

- d) հաղորդումների նկատմամբ կիրառվող **գաղտնիության ռեժիմը,**
- e) հաղորդումներին վերաբերյալ հետագա ընթացքը **ապահովելու կարգը,**
- f) վնասակար գործողությունների պաշտպանվելու միջոցներն ու ընթացակարգերը, ինչպես նաև **գաղտնի խորհրդատվության իրականացումն այն անձանց համար,** որոնք ցանկանում են հաղորդում ներկայացնել,
- g) տեղեկատվություն այն մասին, որտեղ հստակ ձևակերպված է այն դրույթը, ըստ որի գաղտնիության խախտման դեպքում հաղորդում ներկայացրած անձիք **ազատվում են պատասխանատվություն կրելուց:**
- h) տեղեկատվական կենտրոնի կամ առանձին անկախ վարչական մարմնի **կոնտակտային տվյալները:**

Հարկ է նաև նշել, որ անդամ պետությունները ապահովում են, որ իրավասու մարմինները, կանոնավոր կերպով՝ **առնվազն երեք տարին մեկ անգամ վերանայեն հաղորդումների ստացման, հաշվառման և ձևակերպման ընթացակարգերը:** Այս վերանայումների ընթացքում ենթադրվում է, որ իրավասու մարմինները պետք է հաշվի առնեն ինչպես իրենց, այնպես էլ այլ իրավասու մարմինների փորձառությունը և անհրաժեշտության դեպքում, վերանայեն իրենց ընթացակարգերը:

Գ) ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄ

Հանրությանն ազդարարում ներկայացրած անձը օգտվում է Հրահանգով նախատեսված պաշտպանությունից, եթե վերջինս բավարարում է **հետևյալ պայմաններից որևէ մեկին.**

1. անձն առաջին հաղորդումը ներկայացրել է ազդարարման մյուս տեսակներով՝ ներքին և արտաքին, կամ անմիջապես արտաքին ընթացակարգով, սակայն հաղորդմանը Հրահանգով նախատեսված կարգով և ժամկետներում ընթացք չի ստացել,
2. անձը բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ.
 - a) հաղորդումը կարող է **անմիջական կամ ակնհայտ վտանգ հանդիսանալ հանրային շահի համար,** օրինակ՝ առկա է արտակարգ իրավիճակների կամ անդառնալի վնասի վտանգի հավանականություն, կամ
 - b) **արտաքին ազդարարումների դեպքում վնասակար գործողության վտանգի կամ հաղորդման արդյունավետ լուծման ցածր հեռանկարի առկայության**

դեպքում՝ ելնելով գործի առանձնահատուկ հանգամանքներից, ինչպես օրինակ՝ դեպքեր, երբ ապացույցները կարող են թաքցվել կամ ոչնչացվել, կամ երբ իրավասու մարմինը կարող է պայմանավորվածություն ունենալ իրավախախտողի (հանցագործի) հետ, կամ մասնակից լինի իրավախախտման կատարմանը:

Միևնույն ժամանակ պետք է ընդգծել, որ սույն կարգավորումները չեն կիրառվում այն դեպքերում, երբ անձն ուղղակիորեն տեղեկատվություն է տրամադրում մամուլին՝ համաձայն տեղեկատվության ազատության պաշտպանության վերաբերյալ ազգային օրենսդրության:

Գ) ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Ստորև ներկայացվում են տարբեր երկրների օրինակներ ազդարարման տեսակների վերաբերյալ:

ԵՄ անդամ երկրների մեծ մասի օրենսդրությունը բխում է ԵՄ 2019 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ (EU) 2019/1937 ԵՄ-ի իրավունքի խախտումների մասին հաղորդում ներկայացրած անձանց պաշտպանության չափորոշիչների մասին հրահանգից: Մակայն միևնույն ժամանակ, կան երկրներ, որտեղ ամրագրվել են ավելի խիստ ստանդարտներ, քան նախատեսված է Հրահանգով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հրահանգով նախատեսված են նվազագույն ստանդարտներ և խրախուսվում է առավել խիստ կարգավորումների նախատեսումը ազգային օրենսդրություններով:

1. Ներքին և արտաքին ազդարարումների ընտրության հնարավորությունը

ՄԱԼԹԱ: «Ազդարարների պաշտպանության մասին» ակտը ⁸ լրացուցիչ հնարավորություններ է ընձեռում ազդարարներին **արտաքին ազդարարման** համար՝ **առանց նախապես** օգտագործելու **ներքին** եղանակով հաղորդելու ընթացակարգերը, ի լրումն Հրահանգով նախատեսվածների: Օրինակ, եթե կազմակերպության ղեկավարը ներգրավված է (կամ կարող է ներգրավված լինել) հաղորդման մեջ ներկայացրած հարցում, կամ երբ անմիջապես իրավասու մարմինն արտաքին ընթացակարգով հաղորդում ներկայացնելը հիմնավորված է հարցի հրատապությամբ:

⁸ «Ազդարարների պաշտպանության մասին» ակտ VIII (Protection of the Whistleblower Act VIII - CAP 527 of the Laws of Malta): Ընդունվել է 15.09.2013: Հասանելի է՝ <https://legislation.mt/eli/cap/527/eng/pdf>

ՌՈՒՄԻՆԻԱ: «Ազգային բարեվարքության գործակալության» մասին օրենքի⁹ համաձայն՝ հաղորդում ներկայացնող անձինք իրավասու մարմինն ներքին կամ արտաքին ազդարարում ներկայացնելու **ընտրության հնարավորություն (հայեցողություն) ունեն:** Սա որոշակի առումով շեղվում է Հրահանգի այն կարգավորումից, ըստ որի հաղորդում ներկայացնող անձինք, նախքան արտաքին եղանակով ազդարարելը, պետք է նախ ազդարարեն ներքին ընթացակարգերով:

ԻՍՊԱՆԻԱ: «Ինֆորմատորների պաշտպանության ազգային գործակալության մասին» օրենքի համաձայն¹⁰՝ ազդարարները կարող են հաղորդում ներկայացնել **անմիջականորեն իրավասու մարմինին՝** անկախ նրանից վերջիններս ներքին եղանակով ազդարարել են, թե՛ ոչ:

ՌԻԿՐԱԻՆԱ: Ազդարարման ոլորտի լիազորությունները վերապահված են Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալությանը՝ Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի հիման վրա¹¹: Նույն օրենքով նախատեսված է կոռուպցիայի վերաբերյալ կասկածների, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների, ինչպես նաև այլ իրավախախտումների մասին փաստական տվյալներ ունենալու դեպքում **ներքին ազդարարման ընթացակարգեր:** Այս ընթացակարգը ենթադրում է ազդարարների կողմից ներկայացրած տեղեկատվության պաշտպանված ծանուցում (ներառյալ՝ անանուն) մարմնի ղեկավարին կամ լիազորած անձին, իրավաբանական անձին, որտեղ ազդարարը աշխատում է, ծառայում է կամ վերապատրաստում է, կամ նրանց անունից կատարում է աշխատանք, ինչպես նաև վերադաս մարմնին, որի լիազորած անձը վերահսկում է իրենց ենթակա ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում հակակոռուպցիոն օրենսդրության պահպանումը:

Գործակալությունը պարտավոր է համագործակցել ազդարարների հետ, **ապահովել նրանց իրավական և այլ պաշտպանությունը**, տալ հրամաններ, որոնք պահանջում են վերացնել ազդարարների աշխատանքային և այլ իրավունքների հետ կապված խախտումները, ինչպես նաև՝ վարույթ հարուցել ազդարարների հանդեպ կիրառված վնասակար գործողությունների գործերով:

⁹ «Ազգային բարեվարքության գործակալության» մասին օրենք (National Integrity Agency, Law no. 361/2022 on the protection of whistleblowers in the public interest): Ընդունվել է 13.12.2022: Հասանելի է՝ <https://senat.ro/legis/PDF/2022/22L175PX.PDF>

¹⁰ «Ինֆորմատորների պաշտպանության ազգային գործակալության մասին» օրենք No 2/2023 (Independent Authority for the Protection of Informants - Ley 2/2023, de 20 de febrero, reguladora de la protección de las personas que informen sobre infracciones normativas y de lucha contra la corrupción): Ընդունվել է 20.02.2023: Հասանելի է՝ <https://www.boe.es/buscar/act.php?id=BOE-A-2023-4513>

¹¹ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենք: Ընդունվել է 14.10.2014: Հասանելի է՝ <https://zakon.rada.gov.ua/laws/show/1700-18#Text>

Բացի այդ, Գործակալությունը ազդարարներին տրամադրում է **խորհրդատվական պարզաբանումներ, մեթոդական և խորհրդատվական աջակցություն`** Օրենքից բխող հարցերի վերաբերյալ:

Համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները և նրանց տեղակալները կամ պատասխանատու պաշտոնատար անձինք, որոնց լիազորությունները ներառում են ներքին ազդարարման ընթացակարգերի կազմակերպումը, կոռուպցիայի վերաբերյալ կասկածների, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների, ինչպես նաև այլ իրավախախտումների մասին հաղորդումների ստացումը, ազդարարների հետ համագործակցությունը, իրենց գործողությունների համար հաշվետու և պատասխանատու են համապատասխան մարմնի կամ իրավաբանական անձանց իրենց ղեկավարներին:

Կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման ստորաբաժանման իրավասու ղեկավարը պետք է ընտրի և նշանակի ազդարարների պաշտպանության իրականացման համար այդ նպատակով առանձին պատասխանատու անձի:

Ազդարարների պաշտպանության ոլորտում լիազորությունները իրականացնելու համար կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման լիազորված ստորաբաժանումները (պատասխանատու անձինք) իրավունք ունեն.

- 1) համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումներից կամ իրավաբանական անձից պահանջել փաստաթղթեր, այդ թվում` սահմանափակ հասանելիությամբ (բացառությամբ պետական գաղտնիքի) տեղեկատվություն պարունակող, և դրանց պատճենները.
- 2) հրավիրել և հարցազրույց անցկացնել այն անձանց հետ, որոնց գործողությունները կամ անգործությունը կապված է ազդարարի հաղորդած փաստական տվյալների հետ, այդ թվում` մարմնի, հիմնարկի կամ կազմակերպության ղեկավարին, կամ նրա տեղակալներին,
- 3) ազդարարի և նրա հարազատների խախտված իրավունքների վերաբերյալ դիմել Ազգային գործակալություն,
- 4) համապատասխան մարմնի կամ իրավաբանական անձի ղեկավարին ներկայացնել «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքը խախտելու համար մեղավոր անձանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին,
- 5) իրականացնել «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքով նախատեսված այլ լիազորություններ` ուղղված ազդարարների հաղորդումների համակողմանի քննարկմանը և նրանց իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը:

2023 թվականի սեպտեմբերի 6-ին Գործակալությունը գործարկեց ազդարարման միասնական էլեկտրոնային պորտալը, որը հանդիսանում է ներքին ազդարարման միջոց, որով

քաղաքացիները կարող են հայտնել իրենց հանդիպած/արձանագրած կոռուպցիոն դեպքերը: Պորտալին միանալու են կառավարական մյուս գործակալությունները, պետական ընկերությունները, մարզային, քաղաքային, գյուղական և քաղաքային խորհուրդները, իսկ աշխատակիցները կարողանալու են ներկայացնել անանուն հաղորդումներ՝ իրենց աշխատավայրում առկա կոռուպցիայի մասին¹²: Ներքին ազդարարման նպատակով ստեղծված այս պորտալը տալիս շուրջօրյա մուտքի հնարավորություն: Բացի այդ, **գործարկվում է հատուկ հեռախոսագիծ:**

Կոռուպցիայի կամ կոռուպցիոն բնույթի իրավախախտումների հետ կապված հնարավոր փաստերի վերաբերյալ **ռեգուլյար ազդարարման** (*Ուկրաինայում օգտագործվում է «ռեգուլյար» եզրույթը, բայց դրա էությունը ենթադրում է արտաքին ազդարարում*) ընթացակարգով պաշտպանված ծանուցումը (ներառյալ՝ անանուն եղանակով) ներկայացվում է ազդարարի կողմից Դատախազությանը, Ազգային ոստիկանությանը, Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն բյուրոյին, Հետաքննությունների պետական բյուրոյին, Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալությանը:

Այս մարմինները պարտավոր են ապահովել կոռուպցիայի, կոռուպցիոն հանցագործությունների, այլ բնույթի հանցագործությունների և Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքով սահմանված այլ խախտումների վերաբերյալ հնարավոր փաստերի մասով հաղորդումներ ներկայացնելու ներքին և ռեգուլյար (արտաքին) եղանակների գործարկումը:

Կոռուպցիայի կամ կոռուպցիոն բնույթի իրավախախտումների հետ կապված հնարավոր փաստերի վերաբերյալ **արտաքին ազդարարման** (*Ուկրաինայում օգտագործվում է «արտաքին» եզրույթը, բայց դրա էությունը ենթադրում է հանրությանն ազդարարում*) ընթացակարգերը, համաձայն Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի՝ ազդարարի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, այդ թվում՝ ՋԼՄ-ների, լրագրողների, հասարակական միավորումների, արհմիությունների և այլնի միջոցով տեղեկատվության հաղորդումն է:

Նույն օրենքի համաձայն՝ կոռուպցիայի կամ կոռուպցիոն բնույթի իրավախախտումների հնարավոր փաստերի ծանուցումը, որը կատարվել է այդ ներքին կամ հանրությանն ազդարարման եղանակով, լիազորված անձի կողմից ենթակա է նախնական քննության առավելագույնը տասը աշխատանքային օրվա ընթացքում՝ հաղորդումն ազդարարների միասնական պորտալում մուտքագրելու օրվանից հաշված:

¹² https://nazk.gov.ua/en/news/on-september-6-the-nacp-launches-the-unified-whistleblower-reporting-portal/?fbclid=IwAR2X69mD8aAwik3Da2ReV-sVh8fT-6eVKCESs_4USFDqp86Xj5-L104rF-Q

Ազդարարը կարող է օգտագործել հանրությանն ազդարարման եղանակները հաղորդում ներկայացնելու համար (բացառությամբ պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների), եթե՝

- 1) **ներքին և ռեզուլյար** (*Ուկրաինայում օգտագործվում է «ռեզուլյար» եզրույթը, բայց դրա էությունը ենթադրում է արտաքին ազդարարում*) եղանակներով ներկայացրած հաղորդումը դրա իսկության ստուգման կամ հետաքննության իրականացման համար սահմանված ժամկետում արդյունավետ արդյունքներ չի տվել: Սա իր հերթին ենթադրում է, որ.
 - a. ներկայացված հաղորդման իսկության ստուգում կամ հետաքննություն իրականացնելը մերժվել է, կամ
 - b. հայտնաբերված խախտումների վերաբերյալ քրեական հետապնդում չի իրականացվել կամ քրեական գործ չի հարուցվել՝ մեղավոր կողմերին պատասխանատվության ենթարկելու, անձանց ռոնահարված իրավունքների և ազատությունների վերականգնման, պատճառված վնասի փոխհատուցման նպատակով,
 - c. գործողությունները կամ անգործությունը դադարեցնելու համար չեն ձեռնարկվել անհրաժեշտ միջոցներ,
 - d. վնասը կամ սպառնալիքները կանխելու համար որևէ անհրաժեշտ միջոց չի ձեռնարկվել,
- 2) ներքին ազդարարումն արդյունավետ չի լինի, քանի որ հանրային շահերին հասցված վնասի կամ սպառնալիքի մասին բացահայտված տեղեկատվությունը, համաձայն Ուկրաինայի «Տեղեկատվության մասին» օրենքի, համարվում է հանրային շահի առարկա և այդ տեղեկատվության մասին հանրության տեղեկացված լինելու իրավունքը գերակա է դրա տարածման արդյունքում վրա հասնող հնարավոր վնասներից,
- 3) կոռուպցիայի կամ կոռուպցիոն դեպքի վերաբերյալ հնարավոր փաստերի ծանուցման պատճառով ազդարարը կամ նրա հարազատները ազատվել են աշխատանքից (պաշտոնից), ենթարկվել են կարգապահական տույժերի, նրանց նկատմամբ կիրառվել են բացասական ազդեցություն ունեցող կամ խտրականության դրսևորման այլ միջոցներ՝ Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի իմաստով,
- 4) բացակայում են կոռուպցիայի կամ կոռուպցիոն դեպքերի, կամ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքով նախատեսված այլ խախտումների վերաբերյալ ծանուցում ներկայացնելու համար ներքին կամ ռեզուլյար (արտաքին) եղանակներ,
- 5) առկա է տարածված տեղեկատվության հետ կապված փաստաթղթերի կամ ապացույցների ոչնչացման իրական վտանգ:

Միաժամանակ պետք է նշել, որ ՏՀԶԿ-ը Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության մոնիտորինգի 5-րդ փուլի պիլոտային զեկույցի շրջանակներում գնահատելով Ուկրաինայի հակակոռուպցիոն բարեփոխումները¹³, նշել է, որ ազդարարման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկացվածությունը և հաղորդումը կազմելու հնարավորությունների մասին **հաղորդակցությունը բավարար չեն**:

Բացի այդ, ըստ նույն աղբյուրի՝ ազդարարման ընթացակարգերը չեն ընկալվում որպես ինքնավար: Ներքին ազդարարման նկատմամբ Կոռուպցիայի կանխարգելման գործակալության վերահսկողությունը բարելավելու տեղ ունի: **Ազդարարման պատասխանատու անձինք** պետք է **անցնեն վերապատրաստումներ**: Ազդարարումներին հետադարձ կապ չի ապահովվում:

2. Արտաքին ազդարարումները ստանալու և հաշվառելու իրավասու մարմինները

ԳԵՐՄԱՆԻԱ: «Ազդարարների պաշտպանության մասին» ակտի համաձայն¹⁴՝ իրավասու մարմին է համարվում Կոռուպցիայի կանխարգելման և դեմ պայքարի դաշնային գրասենյակը: Մինևույն ժամանակ, նույն ակտի համաձայն՝ այլ մարմիններ ևս ունեն որոշակի իրավասություններ: Դրանց թվին են դասվում՝ Աուդիտի վերահսկման մարմինը, Ֆինանսական հաշվետվությունների վերահսկման մարմինը, Սրբակցության դաշնային մարմինը, Ֆինանսական շուկայի վերահսկման մարմինը, Փողերի լվացման վերաբերյալ հաղորդումների գրասենյակը, Նոտարական պալատները, Փաստաբանների միությունները, Հարկային խորհրդատուների և լիազորված հանրային հաշվապահների պալատը:

ԼՍՏՎԻԱ: «Ազդարարման մասին» ակտի համաձայն¹⁵՝ Լատվիան որպես իրավասու մարմին սահմանել է յուրաքանչյուր ոլորտի պատասխանատուներին՝ ինչպես պետական, այնպես էլ տեղական մակարդակում, կախված ներկայացված հաղորդման բնույթից կախված: Արտաքին

¹³ ՏՀԶԿ (2022) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության մոնիտորինգի 5-րդ փուլի պիլոտային զեկույց. Հակակոռուպցիոն բարեփոխումներ Ուկրաինայում: Էջ 60, հասանելի է՝ <https://www.oecd-ilibrary.org/docserver/b1901b8c-en.pdf?expires=1697202384&id=id&accname=guest&checksum=984354AD1D6CF0967634994B8BFC6385>

¹⁴ «Ազդարարների պաշտպանության մասին» ակտ (Whistleblower Protection Act - Gesetz für einen besseren Schutz hinweisgebender Personen sowie zur Umsetzung der Richtlinie zum Schutz von Personen, die Verstöße gegen das Unionsrecht melden - Hinweisgeberschutzgesetz): Ընդունվել է 12.05.2023: Հասանելի է՝ <https://www.recht.bund.de/bgb1/1/2023/140/VO.html>

¹⁵ «Ազդարարման մասին ակտ» (Whistleblowing Act - Trauksmes celšanas likums): Ընդունվել է 20.01.2022: Հասանելի է՝ <https://likumi.lv/ta/id/329680-trauksmes-celsanas-likums>

ազդարարման պատասխանատու մարմիններից են ¹⁶ , օրինակ Պաշտպանության նախարարությունը, Արտաքին գործերի նախարարությունը, Գերագույն դատարանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Մշակույթի նախարարությունը, Արդարադատության նախարարությունը, Գլխավոր դատախազությունը, Ազգային կինոթատրոնը, Տրանսպորտի նախարարությունը, Գյուղատնտեսության նախարարությունը, Էկոնոմիկայի նախարարությունը, Ֆինանսների նախարարությունը, Կրթության և գիտության նախարարությունը, Ներքին գործերի նախարարությունը, Կլիմայի և էներգետիկայի նախարարությունը, Առողջապահության նախարարությունը, Գյուլբենեի քաղաքապետարանը, Դոբելեի քաղաքապետարանը, Օգրիի քաղաքապետարանը, Ադաջիի քաղաքապետարանը և այլն:

ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ: Ազդարարման գրասենյակը հիմնական իրավասու մարմինն է, սակայն այլ մարմիններ ևս ունեն որոշակի իրավասություններ: Այլ մարմինների թվին են դասվում Ֆինանսական վերահսկողության հանձնաժողովը, Ապահովագրության հանձնաժողովը, Մրցակցության մարմինը, Աշխատանքի և ընդերքի տեսչական մարմինը, Տվյալների պաշտպանության ազգային հանձնաժողովը, Իրավահավասարության ապահովման կենտրոնը, Օմբուդսմենը, Լյուքսեմբուրգի կարգավորող ինստիտուտը, Լյուքսեմբուրգի տեսալսողական ոլորտը վերահսկող անկախ մարմինը, Լյուքսեմբուրգի փաստաբանների գրասենյակը, Նոտարական պալատը, Բժշկական քոլեջը, Բնապահպանության և անտառտնտեսության վարչությունը, Ջրային տնտեսության վարչությունը, Օդային նավիգացիոն վարչությունը, Սպառողների ազգային հաշտարարի ծառայությունը, Երդվյալ հաշվապահների գրասենյակը, Ներքին աուդիտորների ինստիտուտը, Ուղիղ ներդրումների կառավարման գրասենյակը և այլն¹⁷:

ՄԱԼԹԱ: Մալթան նախատեսել է տարբեր իրավասու մարմիններ՝ ներկայացված հաղորդման բնույթից կախված: Մարմինների ամբողջական ցանկը հասանելի է «Ազդարարների պաշտպանության մասին» ակտի 1-ին հավելվածում¹⁸:

¹⁶ Լատվիայի իրավասու մարմինների ամբողջական ցանկը հասանելի է՝ <https://trauksmescelejs.lv/kur-celt-trauksmi>

¹⁷ «Ազդարարման գրասենյակի մասին օրենք» (Reporting Office; Law) (Loi du 16 mai 2023 portant transposition de la directive (UE) 2019/1937 du Parlement européen et du Conseil du 23 octobre 2019 sur la protection des personnes qui signalent des violations du droit de l'Union): Ընդունվել է 16.05.2023: Հասանելի է՝ <https://legilux.public.lu/eli/etat/leg/loi/2023/05/16/a232/jo>

¹⁸ «Ազդարարների պաշտպանության մասին» ակտ VIII (Protection of the Whistleblower Act VIII - CAP 527 of the Laws of Malta): Ընդունվել է 15.09.2013: Հասանելի է՝ <https://legislation.mt/eli/cap/527/eng/pdf>

ՍԼՈՎԵՆԻԱ: «Ազդարարների պաշտպանության մասին» ակտի¹⁹ համաձայն՝ ստեղծվել են մի քանի իրավասու մարմիններ, ինչպես օրինակ՝ Կապի ցանցերի և ծառայությունների գործակալությունը, Արժեթղթերի շուկայի գործակալությունը, Սրցակցության պաշտպանության հանրային գործակալությունը, Երթևեկության անվտանգության հանրային գործակալությունը, Ապահովագրության վերահսկողության գործակալությունը, Հանրային աուդիտի վերահսկողության գործակալությունը, Սլովենիայի բանկը, Պետական գնումների ընթացակարգերի աուդիտի ազգային աուդիտի հանձնաժողովը, Ֆինանսական կառավարման մարմինը, Շուկայի տեսչությունը, Փողերի լվացման կանխարգելման գրասենյակը, Տեղեկատվության հանձնակատարը, որն օրենքի համաձայն ունի ազդարարներին խորհուրդ տալու հատուկ լիազորություններ, Տեղեկատվական անվտանգության տեսչությունը, Ճառագայթային և միջուկային անվտանգության տեսչությունը, Ճառագայթումից պաշտպանության տեսչությունը, Անվտանգ սննդի, անասնաբուծության և բույսերի պաշտպանության տեսչությունը, Աշխատանքի տեսչությունը, Հանրային հատվածի տեսչությունը, Շրջակա միջավայրի և տարածության տեսչությունը, դեղերի և բժշկական սարքերի հանրային գործակալությունը, վերահսկիչ մարմինները՝ համաձայն Սլովենիայի Հանրապետությունում եվրոպական համախմբման քաղաքականության միջոցների օգտագործումը կարգավորող կանոնակարգերի, Առողջապահական տեսչությունը, Սլովենիայի պետական հողինգը և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

ՇՎԵԴԻԱ: Ընդհանուր առմամբ, ներկայացված հաղորդումները մշակելու համար Շվեդիան առաջադրել է 30 իրավասու մարմիններ: Այնուամենայնիվ, որպես ընդհանուր վերահսկողություն իրականացնող մարմին, նշանակվել է Շվեդիայի աշխատանքային միջավայրի վարչությունը²⁰:

¹⁹ «Ազդարարների պաշտպանության մասին» ակտ (Whistleblower Protection Act 301 (Zakon o zaščiti prijaviteljev (ZZPri): Ընդունվել է 27.01.2023, Հասանելի է՝ <https://www.uradni-list.si/glasilo-uradni-list-rs/vsebina/2023-01-0301?sop=2023-01-0301>

²⁰ Աշխատանքային միջավայրի վարչություն (Work Environment Authority; Act No 2021:890 on the protection of persons who report misconduct (Lag om skydd för personer som rapporterar om missförhållanden): Ընդունվել է 29.09.2021: Հասանելի է՝ <https://www.riksdagen.se/sv/dokument-och-lagar/dokument/svensk-forfattningssamling/lag-2021890-om-skydd-for-personer-som-sfs-2021-890/#K10>

Հրամանագիր՝ որ իրավաչափ վարքագծի մասին հայտնած անձանց պաշտպանության մասին: Ընդունվել է 28.10.2021: Հասանելի է՝ <https://svenskforsattningssamling.se/sites/default/files/sfs/2021-10/SFS2021-949.pdf>

ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ա) ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ (CHANNELS) ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

«Ազդարարման համակարգի մասին» ՀՕ-97-Ն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենքը²¹ (այսուհետ նաև՝ Օրենք) ընդունվել է 09.06.2017 թվականին և այս համակարգի զարգացման և կատարելագործման նպատակով օրենքում կատարվել մի շարք փոփոխություններ և լրացումներ: Գործող կարգավորումների համաձայն՝ ՀՀ-ում ազդարարման տեսակներն են՝

- 1) ներքին ազդարարում.
- 2) արտաքին ազդարարում.
- 3) ազդարարում հանրությանը:

Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակը, որի (այսուհետ նաև՝ միասնական էլեկտրոնային հարթակ) միջոցով ազդարարի կողմից ներկայացվում են անանուն եղանակով հաղորդումներ, չի դիտարկվում ազդարարման առանձին տեսակ:

Ազդարարման սահմանումը: Ազդարարումը դա ազդարարի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում (ՏԻՄ-եր), ինչպես նաև կազմակերպություններում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ **տեղեկությունների գրավոր կամ բանավոր հաղորդումն է**, որը տրվում է «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավասու անձին կամ մարմին: Այսինքն ազդարարումը իրականացվում է հետևյալ դեպքերով.

- 1) կոռուպցիոն բնույթի դեպք,
- 2) շահերի բախման կամ դրա հայտարարագրման պահանջի խախտման դեպքեր,
- 3) վարքագծի կանոնի խախտման դեպք
- 4) անհամատեղելիության պահանջի խախտման դեպք,
- 5) այլ սահմանափակումների խախտման դեպք,
- 6) հայտարարագրման հետ կապված խախտման դեպք,

²¹ «Ազդարարման համակարգի մասին» ՀՕ-97-Ն ՀՀ օրենքը հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172131>

7) հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի հետ կապված դեպք:

Սահմանումից պարզ է նաև, որ ազդարարումը իրականացվում է **գրավոր կամ բանավոր կերպով**:

Ազդարարման ընթացակարգը: Ներքին և արտաքին ազդարարումների համար նախատեսված են առանձին ընթացակարգեր, որոնք ներկայացված են ստորև: Միաժամանակ, պետք է նշել, որ ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման, ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանված է ՀՀ կառավարությունը 15.03.2018 թվականի N 272-Ն որոշմամբ²²: Կարևոր է նաև ընդգծել, որ Որոշման մեջ ՀՀ կառավարությունը 06.07.2023 թվականի N 1148-Ն որոշմամբ կատարել է լրացումներ և փոփոխություններ²³, որով բարելավել են ներքին և արտաքին հաշվառումների կարգերը, նախատեսվել են պետական մարմիններում և ՏԻՄ-երում և դրանց ենթակա մարմիններում ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարման կարգը և ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը:

Իրավասու մարմինն տրված է իրավասություն՝ ինքնուրույն սահմանել ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման, ձևակերպման, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը՝ որպես նվազագույն պահանջներ դիտարկելով ՀՀ կառավարության 15.03.2018 թվականի N 272-Ն որոշման պահանջները: Նշված կարգի ընդունելու դեպքում իրավասու մարմինը պարտավոր է այն տեղադրել իր կայքէջում, կայքէջի բացակայության դեպքում՝ իր օգտին աշխատանք կատարող կամ իր կողմից մատուցվող ծառայություններից օգտվող յուրաքանչյուր անձի համար տեսանելի վայրում: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում գրեթե բոլոր պետական մարմինները և ՏԻՄ-ները, այլ կերպ ասած՝ իրավասու մարմինները, ինքնուրույն կարգ չեն սահմանել, չունեն իրենց ոլորտային առանձնահատկություններից ելնելով կարգավորումներ, և իրենց ընդունած կարգերը հանդիսանում են Օրենքի և N 272-Ն որոշման նույնանման կարգավորումներ²⁴: Ավելին, կան

²² ՀՀ կառավարության 15.03.2018 թվականի N 272-Ն որոշումը հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180232>

²³ ՀՀ կառավարության 06.07.2023 թվականի N 1148-Ն որոշումը հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=180199>

²⁴ Տե՛ս օրինակ՝ ՀՀ կադաստրի կոմիտեի իրավական ակտը <https://cadastre.am/storage/files/hraman26072023.pdf>

իրավասու մարմիններ, որտեղ սահմանված կարգը չի վերանայվել N 272-Ն որոշման մեջ 2023 թվականին կատարված փոփոխություններից հետո²⁵:

Անանուն հաղորդումների ներկայացման ընթացակարգերը, այդ թվում ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացվածները, և դրանց առանձնահատկությունները ներկայացված են ստորև:

Իրավասու մարմինը: «Ազդարարման համակարգի մասին» ՀՕ-97-Ն ՀՀ օրենքի համաձայն՝ իրավասու մարմիններն են՝ ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական և համայնքային կազմակերպություններ, հանրային նշանակության կազմակերպություններ: Հանրային նշանակության կազմակերպությունը դա հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունն է: Մասնավոր ոլորտի կազմակերպությունները չեն դասվում հանրային նշանակության կազմակերպությունների շարքին:

ՆԵՐՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄԸ

«Ազդարարման համակարգի մասին» ՀՕ-97-Ն օրենքի համաձայն՝ ներքին ազդարարում է համարվում հաղորդում ներկայացնելն **իր անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին:**

Այսպիսով, ներքին ազդարարումն սկսվում է ազդարարի կողմից իր անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին *(լիազորած անձը հանդիսանում է*

²⁵ Տե՛ս օրինակ՝ Էկոնոմիկայի նախարարության իրավական ակտը <https://mineconomy.am/media/1526/3115.pdf>,

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության իրավական ակտը <https://hightech.gov.am/wp-content/uploads/2023/04/424A-2704944.pdf>

Գյումրու համայնքապետարանի իրավական ակտերը՝ <https://www.gyumricity.am/hy/gyumri-community/internal-and-external-announcement> ,
https://www.gyumricity.am/data/internal_announcement/20.06.18/voroshum.jpg ,
https://www.gyumricity.am/data/internal_announcement/20.06.18/havelvac%201.jpg ,
https://www.gyumricity.am/data/internal_announcement/20.06.18/havelvac%202.jpg ,
https://www.gyumricity.am/data/internal_announcement/20.06.18/grancamatyan.jpg

Մամսիայի համայնքապետարանի իրավական ակտը՝ https://amasia.am/upload/DocFlow/Voroshum/We186201653263117_voroshum48.PDF

Շիրակի մարզպետարանի իրավական ակտը՝ http://shirak.mtad.am/u_files/file/154.pdf

Ապարանի համայնքապետարանի իրավական ակտը՝ https://aparan.am/upload/DocFlow/Voroshum/Th1872610000972796_11.pdf

ազդարարման հարցերով պատասխանատու անձը) հաղորդում ներկայացնելով: Այս մասով բացատրություն են կազմում մասնավոր ոլորտի կազմակերպությունները, որոնք չեն դասվում հանրային նշանակության կազմակերպությունների շարքին: Մասնավոր ոլորտի կազմակերպությունների ազդարարման առանձնահատկությունները ներկայացված են «Մասնավոր ոլորտում ազդարարման համակարգի կատարելագործում» փորձագիտական վերլուծության շրջանակներում:

Եթե ներքին ազդարարման ընթացակարգով հաղորդումն ստացել է ազդարարի անմիջական ղեկավարը կամ նրա վերադասը կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձ կամ աս շարքում չնախատեսված որևէ անձ, ապա այդ անձը պարտավոր է հաղորդումն անհապաղ փոխանցել իրավասու մարմնի ղեկավարին կամ նրա լիազորած անձին:

Իրավասու մարմնի ղեկավարը կամ նրա լիազորած անձը ներքին ազդարարումներ ստանալու դեպքերում ունեն հետևյալ պարտականությունները.

1. ապահովել հաղորդման անհապաղ հաշվառումը: Օրենքի իմաստով անհապաղը ենթադրում է հաղորդումը ստանալու պահից ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում.
2. իր իրավասության շրջանակներում հիմքերի առկայության դեպքում հաղորդման հաշվառման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում ապահովել վարույթի հարուցումը.
3. ապահովել հարուցված վարույթի գաղտնիությունը.
4. իր իրավասությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել հաղորդման իսկությունն ստուգելու նպատակով.
5. իր իրավասության շրջանակներում հաղորդման իսկությունն ստուգելիս հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ այդ մասին հայտնել ՀՀ դատախազություն.
6. իր իրավասության շրջանակներում միջոցներ ձեռնարկել ազդարարներին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով.
7. ապահովել ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե Օրենքով այլ բան նախատեսված չէ.
8. ազդարարի պահանջով ապահովել վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների տրամադրումը.
9. հնարավորություն տալ ազդարարին ներկայացնելու պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ:

Սահմանված պարտականությունների չկատարման համար նախատեսված է վարչական և քրեական պատասխանատվություն, որոնք ներկայացված են ստորև:

Ներքին ազդարարման նկատմամբ ընդհանուր **վերահսկողությունն** իրականացնում է **իրավասու մարմնի ղեկավարը կամ նրա լիազորած անձը**:

Ներքին ազդարարման հիման վրա հարուցված վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Հարուցված վարույթի արդյունքում ընդունվում է համապատասխան ակտ, որի մասին ակտի ընդունման պահից եռօրյա ժամկետում ազդարարը ծանուցվում է:

Հայաստանում **ներքին ազդարարումը իրականացվում է բանավոր կամ գրավոր կարգով**: Որևէ այլ կարգ կամ եղանակ ՀՀ օրենսդրությամբ **նախատեսված չէ**: Ներքին ազդարարման դեպքում վարվում է էլեկտրոնային²⁶ գրանցամատյան, որտեղ **արձանագրվում են հետևյալ տեղեկությունները՝**

1. հաղորդման հաշվառման հերթական համարը.
2. հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը.
3. հաղորդման հաշվառման օրը, ամիսը, տարեթիվը.
4. հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը,
5. հաղորդումը ներկայացրած անձի պաշտոնը.
6. հաղորդման ներկայացման կարգը՝ բանավոր կամ գրավոր.
7. հաղորդմամբ ներկայացված տեղեկության համառոտ բովանդակությունը.
8. հաղորդման առնչությամբ Օրենքի հիման վրա ձեռնարկված միջոցառումների, ներառյալ պաշտպանության տրամադրված միջոցների ամբողջական նկարագիրը.
9. հաղորդման առնչությամբ Օրենքի հիման վրա ձեռնարկված միջոցառումների, ներառյալ պաշտպանության միջոցների տրամադրման արդյունքը.
10. նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ.
11. հաղորդում ներկայացրած անձի կողմից լրացուցիչ ներկայացված պարզաբանումների, փաստաթղթերի կամ դիմումների ներկայացման օրը, ամիսը, տարին և համառոտ բովանդակությունը.
12. հաղորդում ներկայացրած անձի ստորագրությունը (հնարավորության դեպքում).
13. հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ.

²⁶ Անհրաժեշտության դեպքում գրանցամատյաններն իրավասու մարմնի կամ կազմակերպության ղեկավարի հիմնավորված իրավական ակտով կարող են վարվել թղթային տարբերակով:

14. պատասխանատու անձի ստորագրությունը²⁷:

ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄԸ

«Ազդարարման համակարգի մասին» ՀՕ-97-Ն օրենքի համաձայն՝ **արտաքին ազդարարում է** համարվում իրավասու մարմին հաղորդում ներկայացնելը: Այսպիսով, արտաքին ազդարարումն սկսվում է ազդարարի կողմից իրավասու մարմին հաղորդում ներկայացնելով: Եթե այդ հաղորդումը վերաբերում է իրավասու մարմնի աշխատակցին, ապա ազդարարումը կատարվում է իրավասու մարմնի ղեկավարին: Իսկ այն դեպքում, երբ հաղորդումը վերաբերում է իրավասու մարմնի ղեկավարին, ապա այն ներկայացվում է իրավասու մարմնի վերադաս մարմնի ղեկավարին: Իրավասու մարմնի վերադաս մարմնի բացակայության դեպքում հաղորդումը ներկայացվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (ԿԿՀ) կամ համապատասխան մարմնի հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողով²⁸, եթե այդպիսին առկա է:

Իրավասու մարմինը արտաքին ազդարարումներ ստանալու դեպքերում ունի հետևյալ պարտականությունները.

1. ապահովել հաղորդման անհապաղ հաշվառումը: Օրենքի իմաստով անհապաղը ենթադրում է հաղորդումը ստանալու պահից ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում.
2. իր իրավասության շրջանակներում հիմքերի առկայության դեպքում հաղորդման հաշվառման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում հարուցել վարույթ.
3. ապահովել վարույթի գաղտնիությունը.
4. իր իրավասությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել հաղորդման իսկությունն ստուգելու նպատակով.

²⁷ Ներքին ազդարարման հաղորդումների հաշվառումը կատարվում է ՀՀ կառավարության 15.03.2018 թվականի N 272-Ն որոշմամբ:

²⁸ «Հանրային ծառայության մասին» ՀՕ-206-Ն ՀՀ օրենքի համաձայն՝ էթիկայի հանձնաժողովները հետևում են հանրային ծառայողների բարեվարքության պահանջների պահպանմանը, որը ներառում է՝ (ա) հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, (բ) այլ սահմանափակումների, (գ) վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բխման դեպքերի վերաբերյալ դիմումների քննում և լուծումը, (դ) հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, (ե) այլ սահմանափակումների, (զ) վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև (է) շահերի բխման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը իրավասու մարմին կամ պաշտոնատար անձին:

5. իր իրավասության շրջանակներում հաղորդման իսկությունն ստուգելիս հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ այդ մասին հայտնել ՀՀ դատախազություն.
6. իր իրավասության շրջանակներում միջոցներ ձեռնարկել ազդարարներին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով.
7. ապահովել ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե Օրենքով այլ բան նախատեսված չէ.
8. ազդարարի պահանջով ապահովում է վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների տրամադրել.
9. հնարավորություն տալ ազդարարին ներկայացնելու պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ:

Սահմանված պարտականությունների չկատարման համար նախատեսված է վարչական և քրեական պատասխանատվություն, որոնց ներկայացված են ստորև: առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Այն դեպքում, եթե հաղորդումը ներկայացվել է ոչ իրավասու մարմին, ապա հաղորդում ստացած մարմինը եռօրյա ժամկետում այն **վերահասցեագրում է** իրավասու մարմնին՝ **ծանուցելով ազդարարին:**

Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգը, որով սահմանված է նախաքննություն իրականացնող մարմինների կողմից հանցագործության վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման կարգը, **չի կարող դիտարկվել որպես արտաքին ազդարարում:**

Արտաքին ազդարարման վարույթի շրջանակներում կարևոր տեղ է զբաղեցնում ազդարարի անձնական տվյալների պաշտպանությունը, այդ տվյալները բացահայտելու ընթացակարգերը: Ըստ այդմ, եթե ազդարարը համաձայնություն չի տվել իր անձնական տվյալները բացահայտելու վերաբերյալ, ապա մարմինը, որն ստացել է ազդարարի ներկայացրած հաղորդումը և իրավասու չէ վարույթ հարուցելու, պարտավոր է **ստանալ ազդարարի նախնական համաձայնությունը**, և հետո նոր այն **վերահասցեագրել՝** ուղարկել ըստ ենթակայության: Իսկ եթե այնուամենայնիվ, ազդարար չի տալիս իր համաձայնությունը, ապա հաղորդումն ուղարկվում է ըստ ենթակայության՝ առանց ազդարարի անձնական տվյալները բացահայտելու:

Արտաքին ազդարարման հիման վրա հարուցված վարույթի համար ընդհանուր կարգով նախատեսված է առավելագույն 30 օրյա ժամկետ: Հարուցված վարույթի արդյունքում ընդունվում է համապատասխան ակտ, որի մասին ակտի ընդունման պահից եռօրյա ժամկետում ազդարարը ծանուցվում է:

Հայաստանում **արտաքին ազդարարումը իրականացվում է բանավոր կամ գրավոր կարգով:** Որևէ այլ կարգ ՀՀ օրենսդրությամբ **նախատեսված չէ:** Արտաքին ազդարարման դեպքում վարվում է էլեկտրոնային²⁹ գրանցամատյան, որտեղ **արձանագրվում են հետևյալ տեղեկությունները՝**

- 1) հաղորդման, ներառյալ Օրենքի իմաստով վերահասցեագրման ենթակա հաղորդման հաշվառման հերթական համարը.
- 2) հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը.
- 3) հաղորդման հաշվառման օրը, ամիսը, տարեթիվը.
- 4) հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը, իսկ իրավաբանական անձի դեպքում նաև ֆիրմային անվանումը, պետական գրանցման համարը, իրավաբանական անձում գրադեցրած պաշտոնը.
- 5) հաղորդման ներկայացման կարգը՝ բանավոր կամ գրավոր.
- 6) հաղորդմամբ ներկայացված տեղեկության համառոտ բովանդակությունը.
- 7) հաղորդման առնչությամբ օրենքի հիման վրա ձեռնարկված միջոցառումների, ներառյալ պաշտպանության տրամադրված միջոցների ամբողջական նկարագրիրը.
- 8) հաղորդման առնչությամբ օրենքի հիման վրա ձեռնարկված միջոցառումների, ներառյալ պաշտպանության միջոցների տրամադրման արդյունքը.
- 9) նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ.
- 10) հաղորդում ներկայացրած անձի կողմից լրացուցիչ ներկայացված պարզաբանումների, փաստաթղթերի կամ դիմումների ներկայացման օրը, ամիսը, տարին և համառոտ բովանդակությունը.
- 11) հաղորդում ներկայացրած անձի ստորագրությունը (հնարավորության դեպքում).
- 12) հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ, ներառյալ օրենքի իմաստով ոչ իրավասու մարմնին հասցեագրված հաղորդումների վերահասցեագրումների վերաբերյալ տեղեկություններ.
- 13) պատասխանատու անձի ստորագրությունը:

Ներքին և արտաքին ազդարարումների դեպքում պատասխանատու անձի կողմից ազդարարման հաղորդման յուրաքանչյուր գործով հաշվառման, ձևակերպմանը զուգահեռ, պահվում են հաղորդմանը վերաբերող բոլոր փաստաթղթերը, իսկ դրանց բնօրինակների՝ այլ անձի կամ մարմնի փոխանցելու դեպքերում, բնօրինակների պատճենները:

²⁹ Անհրաժեշտության դեպքում գրանցամատյաններն իրավասու մարմնի կամ կազմակերպության ղեկավարի հիմնավորված իրավական ակտով կարող են վարվել թղթային տարբերակով:

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄԸ

Մինչև ազդարարման այս տեսակի ներկայացման անցնելը, հարկ է նշել, որ «Հանրությանն ազդարարումը» տեսակը համեմատած նոր է Հայաստանում: Այն ՀՀ իրավական համակարգ ներմուծվեց 2022 թվականի դեկտեմբերի 7-ին, երբ Ազգային Ժողովը (ԱԺ) ընդունվեց «Ազդարարման համակարգի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքները³⁰:

«Ազդարարման համակարգի մասին» ՀՕ-97-Ն օրենքի համաձայն՝ հանրությանն ազդարարում են համարվում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներում (ԶԼՄ-ներում) տեղ գտած հրապարակումները, որոնք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի համաձայն, համապատասխան վարույթ նախաձեռնելու առիթ կամ հիմք կարող են հանդիսանալ: Այստեղ կարևոր է ընդգծել, որ հանրությանը ազդարարումը հնարավոր է իրականացնել միայն **որոշակի պայմանի առկայության դեպքում**: Մասնավորապես, երբ ազդարարման մյուս՝ ներքին և արտաքին տեսակներով ներկայացրած հաղորդումը Օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում ընթացք չի ստացել, ապա **այս դեպքում** ազդարարը կարող է հաղորդումը հայտնի դարձնել հանրությանը ԶԼՄ-ներով:

Հաղորդում ստացած ԶԼՄ-ները պարտավոր են ապահովել ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե առկա չէ անձի գրավոր համաձայնությունը կամ օրենքով նախատեսված այլ հիմքեր (օրինակ՝ ազդարարը գործել է անբարեխիղճ, և նրա դադարեցվում է նրան պաշտպանության միջոցների տրամադրումը): Ազդարարման այս տեսակի դեպքում ԶԼՄ-ների նկատմամբ տարածվում են ազդարարին տրվող պաշտպանությունը այնքանով, որքանով այդ պաշտպանությունն իր էությունը կիրառելի է նրանց նկատմամբ:

Երբ հաղորդումը հրապարկվում է ԶԼՄ-ի միջոցով, ապա իրավասու մարմինը պարտավոր է ապահովել իր իրավասության ոլորտին առնչվող հաղորդումների հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը:

Հանրությանը արված ազդարարումը հայտնաբերելուց պահից իրավասու մարմինը ունի այն նույն պարտականությունները, որոնք նախատեսված են արտաքին ազդարարման վարույթի

³⁰ «Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-495-Ն օրենք, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172090>

ընթացքում: Այս դեպքում ևս սահմանված պարտականությունների չկատարման համար նախատեսված է վարչական և քրեական պատասխանատվություն: Նույնանման կարգավորում տրված է նաև հարուցված վարույթի մասով, այն է՝ 30 օր է, որի վերաբերյալ ընդունվում է ակտ և այդ մասին եռօրյա ժամկետում ծանուցվում է ազդարարը, եթե նրա անձը հայտնի է:

ԶԼՄ-ների համար հանրությանն ազդարարումը հաշվառելու **ընթացակարգ նախատեսված չէ**: Սակայն, հանրությանն ազդարարման հիման վրա արտաքին ազդարարման վարույթ հարուցելու դեպքում, իրավասու մարմնի համար գործում է արտաքին ազդարարման վարույթով ստացված հաղորդումների հաշվառման ընթացակարգը:

ԱԶԳԱՐԱՐՈՒՄԸ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՑԻՆ ՀԱՐԹԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ

Նախևառաջ, կարևոր է ընդգծել, որ գործող իրավակարգավորումների համաձայն՝ ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով հաղորդում ներկայացնելը չի համարվում ազդարարման առանձին տեսակ: Այն դիտարկվում է որպես ազդարարում ներկայացնելու միջոց, որով ազդարարը **կարող է անանուն** եղանակով հաղորդել տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման մասին:

Ի սկզբանե, երբ ընդունվեց Օրենքը, միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով անանուն կերպով թույլատրվում էր հաղորդել միայն կոռուպցիոն բնույթի դեպքերը: Այլ իրավախախտումների վերաբերյալ հաղորդումները չէին ընդունվում: Այս կարևոր փոփոխությունը կատարվեց 2022 թվականի դեկտեմբերի 7-ին՝ ԱԺ-ի կողմից ընդունված «Ազդարարման համակարգի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքների ուժով³¹:

Միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ՀՀ-ը՝ ի դեմս ՀՀ կառավարության լիազոր մարմնի, որն է՝ ՀՀ արդարադատության նախարարությունը, երաշխավորում է ազդարարի պաշտպանությունը՝ ապահովելով նրա անանունությունը: Միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ազդարարի անանունությունը երաշխավորվում է նրա համացանցային հաղորդակարգի հասցեն (Internet Protocol Address) ծածկագրելու միջոցով:

³¹ «Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-495-Ն օրենք, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172090>

Այս լիազոր մարմնին որևէ պարագայում չպետք է խառնել ՀՀ Գլխավոր դատախազության հետ, որը պատասխանատու են հարթակով ստացված հաղորդումների ընթացքը ապահովելու, այդ թվում՝ վերահասցեագրելու համար: Այլ կերպ ասած, լիազոր մարմինը՝ Արդարադատության նախարարությունը ապահովում է հարթակի տեխնիկական անվտանգությունը, իսկ Գլխավոր դատախազությունը՝ ապահովում է բովանդակային ընթացքը:

Բացի Գլխավոր դատախազությունից, նախատեսված է, որ Մարդու իրավունքների պաշտպանին (ՄԻՊ) նույնպես ապահովվելու է միասնական էլեկտրոնային հարթակին մասնակի հասանելիություն, քանի որ վերջինս հանդիսանում է այն մարմինը, որը կհավաքի իրավասու մարմինների կողմից ստացված վիճակագրությունը, և կիրառարակի դրանք միասնական էլեկտրոնային հարթակում:

Միասնական էլեկտրոնային հարթակը օժտված է հետադարձ կապի միջոցով անանուն հաղորդմանն առնչվող անհրաժեշտ տեղեկությունների և փաստերի հավաքման հնարավորությամբ: Այս հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատված է ՀՀ կառավարության 12.04.2018 թվականի N 439-Ն որոշմամբ³²:

Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի հասցեն է՝ <https://azdararir.am/am/>:

Ազդարարի անբարեխիղճ գործելու հետևանքները: Ազդարարման բոլոր տեսակների՝ ներքին, արտաքին և հանրությանը արված հաղորդումների, ինչպես նաև ազդարարման էլեկտրոնային միասնական հարթակով (*իհարկե, եթե հարթակի միջոցով հաղորդումը ներկայացվել է անձնական տվյալները բացահայտելու եղանակով*) ներկայացրած հաղորդման հիման վրա հարուցված վարույթների ընթացքում եթե պարզվում է, որ ազդարարը հաղորդում ներկայացնելիս գործել է անբարեխիղճորեն, ապա դադարեցվում է նրան պաշտպանության տրամադրումը: Այս որոշումը կայացնում է ներքին ազդարարման դեպքում՝ իրավասու մարմնի ղեկավարը կամ նրա լիազորած անձ, իսկ արտաքին և հանրությանը ազդարարելու դեպքում՝ իրավասու մարմինը: Որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում ծանուցվում ազդարարը:

Բացի այդ, եթե ազդարարի ոչ բարեխիղճ գործողությունը պարունակում է հանցագործության հատկանիշներ, ապա հաղորդումն ստացած անձը պարտավոր է անհապաղ այդ մասին հայտնել ՀՀ դատախազություն:

Հարկ է նաև նշել, որ «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի իմաստով՝ ազդարարը գործում է անբարեխիղճորեն, եթե՝

³² ՀՀ կառավարության 12.04.2018 թվականի «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին» N 439-Ն որոշում, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=130444>

1. իր ներկայացրած հաղորդումը չի համապատասխանում հետևյալ հատկանիշներին.
 - a. ներկայացրած հաղորդման կասկածների մասով առկա են ունեն ողջամիտ հիմքեր,
 - b. ազդարարի համոզմամբ տեղեկությունը ճշմարտացի է,
 - c. նախքան ազդարարումը ազդարարը իր իրական հնարավորությունների սահմաններում միջոցներ է ձեռնարկել ստուգելու տեղեկության ճշտությունը և ամբողջականությունը
2. ազդարարումը կատարվել է ապօրինի եղանակով, այդ թվում՝ հանցագործության կատարմամբ կամ մարդու սահմանադրական իրավունքների խախտմամբ ձեռք բերված տեղեկությունների հիման վրա,
3. ազդարարը իր կամ այլ անձի համար պահանջում կամ ստանում է որևէ առավելություն,
4. այլ անձի վնաս պատճառելու նպատակով դիտավորությամբ հաղորդում է կեղծ տեղեկություններ:

Քրեական պատասխանատվությունը ազդարարի տվյալի ապօրինի հրապարակման համար:

ՀՀ քրեական օրենսգրքով հանցագործություն է որակվում ազդարարի տվյալի ապօրինի հրապարակումը³³: Մասնավորապես, **ազդարարի տվյալի** ապօրինի հրապարակումն **այն անձի կողմից**, որին այդ տվյալը **վստահվել կամ հայտնի է դարձել նրա ծառայողական գործունեության կապակցությամբ՝** պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Ազդարարի տվյալի ապօրինի հրապարակումը **հաղորդում ստացած ՁԼՄ-ի ներկայացուցչի** կողմից՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

³³ ՀՀ քրեական օրենսգրք, հոդված 502, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=181303>

Այսպիսով, այս հանցագործության սուբյեկտներն են դիտարկում երկուսը.

- 1) այն անձը, որին այդ տվյալը վստահվել կամ հայտնի է դարձել նրա ծառայողական գործունեության կապակցությամբ,
- 2) զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, ում ներկայացվել է հրապարակումը հաղորդումը:

Առաջինի դեպքում նախատեսված քրեական պատժի տեսակներն են՝

- տուգանք՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ
- հանրային աշխատանքներ՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ
- որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ
- ազատության սահմանափակում՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ
- կարճաժամկետ ազատազրկում՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ
- ազատազրկում՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Երկրորդի դեպքում նախատեսված քրեական պատժի տեսակներն են՝

- տուգանք՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ
- հանրային աշխատանքներ՝ առավելագույնը հարյուր ժամ տևողությամբ,
- ազատության սահմանափակում՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ
- կարճաժամկետ ազատազրկում՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ
- ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

Վարչական պատասխանատվությունը ազդարարի ներկայացրած հաղորդումը չհաշվառելու, հիմքերի առկայության դեպքում վարույթ չհարուցելու, ազդարարի իրավունքների պաշտպանություն չիրականացնելու համար: ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի համաձայն³⁴՝ ազդարարի կողմից ներկայացված կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների **հաղորդումը չհաշվառելը**, դրա հիման վրա հիմքերի առկայության դեպքում **վարույթ չհարուցելը**, հարուցված վարույթի **գաղտնիությունը չսպաստելը**, ազդարարին պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ ներկայացնելու **հնարավորություն չընձեռելը**, ազդարարի պահանջով վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին **տեղեկություններ չտրամադրելը**, հաղորդման **խսկությունն**

³⁴ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, հոդված 41.5, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=183665>

ստուգելու, ազդարարին վնասակար գործողություններից **պաշտպանելու**, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով **միջոցներ չձեռնարկելը**, եթե տվյալ արարքը չի պարունակում հանցագործության հատկանիշներ՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով, որը կազմում է 100,000-200,000 ՀՀ դրամ:

Բացի այս, եթե ազդարարի անձնական տվյալները մշակելու ընթացքում **գաղտնիությունը չի ապահովվում**, ու եթե տվյալ արարքը չի պարունակում հանցագործության հատկանիշներ (օրինակ՝ ազդարարի տվյալները չեն հրապարակվել ապօրինաբար)՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, որը կազմում է 300,000-400,000 ՀՀ դրամ:

Բ) ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Վերջին տարիներին ազդարարման համակարգի զարգացումը հանդիսացել է ՀՀ կառավարության՝ կոռուպցիայի դեմ պայքարի ուղղություններից մեկը: Այն ներառված է եղել ՀՀ երրորդ³⁵ և չորրորդ³⁶ հակակոռուպցիոն ռազմավարությունների և դրանցից բխող միջոցառումների ծրագրի շրջանակներում³⁷: Ներկայում վերջնականացման փուլում է գտնվում ՀՀ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությունը և ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը³⁸: Ռազմավարության նախագծում որպես առանձին ռազմավարական ուղղություն նախատեսված է ազդարարման համակարգի կատարելագործումը և արդիականացումը և այս ուղղության կատարման նպատակով որոշակի գործողություններ են նախատեսված ռազմավարության գործողությունների ծրագրի նախագծում:

³⁵ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թթ. միջոցառումների ծրագիրը և պետական եկամուտների հավաքագրման, ոստիկանության կողմից քաղաքացիներին ծառայությունների մատուցման, առողջապահության և կրթության ոլորտներում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերի և դրանց չեզոքացմանը և (կամ) նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագրերը: Հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119838>

³⁶ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագիրը: Հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=168051>

³⁷ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրով նախատեսված ազդարարման համակարգի բարելավման ուղղությամբ կատարված աշխատանքները ներկայացված են եզրափակիչ գնահատման և մոնիթորինգի զեկույցում: Էջեր 229-231, հասանելի է՝ https://moj.am/storage/files/pages/pg_7967694028641_AC_M-A_Report_final_2023-compressed_1.pdf

³⁸ ՀՀ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծ, էջ 45: Հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/5986/about>

Շարունակելով ազդարարման համակարգի և տեսակների կիրառման պրակտիկան, ևս մեկ անգամ հարկ է ընդգծել, որ «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով նախատեսված է ազդարարման երեք տեսակների՝ ներքին, արտաքին և հանրությանը ազդարարման տեսակների հստակ առանձնացումը, սակայն դրանց գործնական արդյունավետ կիրառումը բավարար չափով ապահովված չէ: Նշվածը հիմնավորվում է այն իրողությամբ, որ ներքին և արտաքին ազդարարման տեսակներով ներկայացրած հաղորդումների թիվը ցածր է: Հանրությանն ազդարարման վերաբերյալ վիճակագրական տվյալներն էլ դեռևս հասանելի չեն:

Այսպես, ազդարարման համակարգի գործարկումից մինչ օրս ստացված ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրություն ունի հետևյալ պատկերը.

ՀՀ արդարադատության նախարարության կողմից հրապարակված տեղեկատվության համաձայն՝ պետական մարմիններում գրանցվել է **ներքին ազդարարման 13 և արտաքին ազդարարման 73 դեպք**³⁹, որից

- **Պաշտպանության նախարարությունում**՝ 66 արտաքին ազդարարում, 10 ներքին ազդարարում,
- **Արտաքին գործերի նախարարությունում**՝ 1 արտաքին ազդարարում, 3 ներքին ազդարարում,
- **Կրթության տեսչական մարմնում**՝ 1 արտաքին ազդարարում,
- **Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում**՝ 1 արտաքին ազդարարում,
- **Մենդամթերքի անվտանգության տեսչական մարմնում**՝ 4 արտաքին ազդարարում:

Արտաքին ազդարարման 11 դեպքով իրավապահ մարմինների կողմից նախաձեռնվել են քրեական վարույթներ: Մենդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ քրեական վարույթների շրջանակներում 10 անձի պաշտոնավարումը ժամանակավորապես դադարեցվել է, որից 6 անձ ազատվել են զբաղեցրած պաշտոնից:

Բացի այդ, Արտաքին գործերի նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ազդարարումների արդյունքում կատարվել են ծառայողական քննություններ կամ աուդիտ, իսկ մեկ արտաքին ազդարարման դեպքում խնդիրը լուծվել է դատական կարգով (վճռաբեկ դատարանի որոշմամբ), քանի որ այն առնչվում էր աշխատանքային հարաբերություններին:

Ազդարարման էլեկտրոնային միասնական հարթակի միջոցով 2019-2022 թվականների ընթացքում ստացված հաղորդումների մասով վիճակագրությունն ունի հետևյալ պատկերը.

2019 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունում ազդարարման էլեկտրոնային միասնական հարթակի միջոցով ստացվել է **188 ազդարարում**: Նշված 188 ազդարարումներից՝

³⁹ ՀՀ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծ, էջ 44: Հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/5986/about>

- 153-ը եղել են **անանուն**,
- 97-ով **հարուցվել** է ազդարարման վարույթ,
- 91-ով **մերժվել** է վարույթի հարուցումը:

Հարուցված ազդարարման վարույթներից՝

- 21-ով վարույթը **կարճվել** է,
- 59-ը **ուղարկվել է օպերատիվ-հետախուզական մարմին**՝ ազդարարումը ստուգելու համար,
- 17-ն ուղարկվել է ըստ **ենթակայության**:

5 ազդարարման դեպքով, որոնք բոլորն են ստացվել են անանուն, հարուցվել է քրեական գործ, սակայն գործերը կարճվել են:

2020 թվականի ընթացքում ազդարարման համակարգի միջոցով ստացվել է **140 ազդարարում**: Նշված 140 ազդարարումից՝

- 119-ը եղել է **անանուն**,
- 91-ով **հարուցվել** է ազդարարման վարույթ,
- 33-ով **մերժվել** է վարույթի հարուցումը:

Հարուցված ազդարարման վարույթներից՝

- 24-ով վարույթը **կարճվել** է,
- 86-ը **ուղարկվել է օպերատիվ-հետախուզական մարմին**՝ ազդարարումը ստուգելու համար,
- 15-ը ուղարկվել է ըստ **ենթակայության**:

1 ազդարարման դեպքով, որը ստացվել է անանուն, հարուցվել է քրեական գործ, որը գտնվում է նախաքննության փուլում:

2021 թվականի ընթացքում արձանագրվել է ազդարարման համակարգով ստացված ազդարարումների թվի նվազում: Ըստ այդմ՝ ազդարարման համակարգի միջոցով ստացվել է **75 ազդարարում**, որոնցից 68-ը վերաբերել են առերևույթ կոռուպցիոն բնույթի դեպքերին: Նշված 75 ազդարարումներից՝

- 70-ը եղել են անանուն,
- 59-ով հարուցվել է ազդարարման վարույթ,
- 16-ով **մերժվել** է վարույթի հարուցումը:

Հարուցված ազդարարման վարույթներից՝

- 32-ով վարույթը կարճվել է,
- 47-ը ուղարկվել է **օպերատիվ-հետախուզական մարմին**՝ ազդարարումը ստուգելու համար:

10 ազդարարման, որոնցից 9-ը ստացվել են անանուն, իսկ մեկը՝ տվյալներ հայտնելով, հարուցվել է քրեական գործ: Հարուցված քրեական գործերից՝

- 5-ը կարճվել է,
- 4-ը գտնվում է **նախաքննության փուլում**,
- 1-ը գտնվում է **դատաքննության փուլում**:

2022 թվականի ընթացքում ազդարարման էլեկտրոնային համակարգի միջոցով ստացվել է **116 ազդարարում**, որից՝

- 74-ը եղել է անանուն,
- 82-ով հարուցվել է ազդարարման վարույթ,
- 34-ով մերժվել է ազդարարման վարույթի հարուցումը:

9 ազդարարման դեպքով, որոնք բոլորն էլ ստացվել են անանուն, հարուցվել է քրեական գործ: Հարուցված քրեական գործերից՝

- 1-ը կարճվել է,
- 8-ը գտնվում է **նախաքննության փուլում**⁴⁰:

Այսպիսով, ներկայացված պրակտիկան և վիճակագրական տվյալները փաստում են այն մասին, որ ՀՀ-ում ազդարարման համակարգը շարունակական կատարելագործման կարիք ունի: Ազդարարման տեսակների կիրառման պրակտիկան դեռևս գտնվում է ձևավորման փուլում, չնայած այն հանգամանքին, որ Օրենքը ընդունվել է 2017 թվականից: Հատկապես այս տեսանկյունից առաջացել է խիստ անհրաժեշտություն վերանայել ներքին, արտաքին և հանրությանը ազդարարման տեսակները, դրանց գործիքները՝ միջազգային ստանդարտներին համապատասխան:

Հաջողության կամ հանգուցալուծված դեպքեր հանրությանը դեռևս հայտնի չեն: Ամեն դեպքում, այդ մասին առկա չէ բավարար տեղեկատվություն բաց աղբյուրներում, բացառությամբ մեկ աշխատանքային դեպքի: Սակայն այս մասով տրամադրված տեղեկությունը ևս նեղ է, անգամ պարզ չէ, թե այդ գործը հոգուտ ում է հանգուցալուծվել:

⁴⁰ <https://azdararir.am/am/case?content.cid=7>

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն եզրակացությունները հիմնված են միջազգային ստանդարտների ու միջազգային փորձի, ինչպես նաև ազդարարման օրենսդրության և պրակտիկայի վերլուծության վրա:

Ա) ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՏՀԶԿ ստանդարտներից մեկը վերաբերում է նշյալին՝ «2.1 Հաղորդում ներկայացնելու հետևյալ ընթացակարգերը նախատեսված են օրենքով և գործում են պրակտիկայում» ((D) Օրենքը նախատեսում է **ազդարարների ընտրության հնարավորություն՝ հաղորդումը ներքին կամ արտաքին ընթացակարգով ներկայացնելու վերաբերյալ**), (Թիվ 2 ինդիկատորի 2.1 (D) հենիանիշ):

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է ներքին և արտաքին ազդարարման տեսակները, բայց որպես այդպիսին, ուղղակիորեն չի նախատեսում, որ ազդարարը կարող է ընտրել, թե որ տեսակով ներկայացնի հաղորդումը. ներքին, թե՞ արտաքին:

2. Ըստ ՏՀԶԿ, ԵՄ ստանդարտների և միջազգային փորձի՝ ներքին և արտաքին ազդարարումների դեպքում իրավասու մարմինների կայքէջերում հատուկ առանձնացված բաժիններում ներկայացվում են ներքին և արտաքին ազդարարման համար պատասխանատու ստորաբաժանման կամ պատասխանատու անձանց կոնտակտային տվյալները, ներառյալ՝ **էլեկտրոնային և փոստային հասցեները, հեռախոսահամարները՝** նշելով, թե **արդյոք հեռախոսային խոսակցությունները ձայնագրվում են**, հաղորդումների հաշվառման համար **կիրառելի ընթացակարգերը**, այդ թվում նշելով, թե իրավասու մարմինը ինչպե՞ս և ի՞նչ տեսակի տեղեկատվություն կարող է պահանջել հաղորդում ներկայացրած անձից, ներառյալ՝ հաղորդած տեղեկատվության վերաբերյալ **պարզաբանումների և լրացուցիչ տեղեկատվության** տրամադրման անհրաժեշտությունը, **հետադարձ կապի ապահովման ժամկետը, եղանակը և բովանդակությունը**, տեղեկատվություն այն մասին, որտեղ հստակ ձևակերպված է այն դրույթը, ըստ որի գաղտնիության խախտման դեպքում հաղորդում ներկայացրած անձիք **ազատվում են պատասխանատվություն կրելուց**:

Հայաստանում թեև իրավասու մարմինների կայքէջերում կան տեղեկատվություն, սակայն դրանք շատերի դեպքում թերի են (ոչ բոլորի դեպքում կան ամբողջական կոնտակտային տվյալներ, այդ թվում չկա նշում հեռախոսային խոսակցությունները ձայնագրման մասին ⁴¹ , ազդարարման պատասխանատուների մասին տեղեկատվությունը տեսանելի տեղում չէ ⁴²), իսկ պարզաբանումները և տեղեկատվությունը իրականում հանդիսանում են օրենքից մեջբերում, և ոչ թե հանրամատչելի կերպով բացատրված⁴³:

Բ) ՆԵՐՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. ՏՀԶԿ ստանդարտներից է հանդիսանում հետևյալը. «2.1 Հաղորդում ներկայացնելու հետևյալ ընթացակարգերը նախատեսված են օրենքով և գործում են պրակտիկայում՝ (A) **Ներքին ազդարարման ընթացակարգ՝ հանրային հատվածի և պետական մասնակցությամբ ձեռնարկությունների աշխատավայրերում (Թիվ 2 ինդիկատորի 2.1 (A) հենիանիշ)**:

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է ներքին ազդարարում ներկայացնելու հնարավորություն: Չնայած սրան, հանրային (պետական) հատվածի կառույցների համար, որպես այդպիսին, **ներքին ազդարարման ընթացակարգեր ներդնելու ուղիղ (անմիջական) պարտավորություն նախատեսված չէ:** Օրենքը ուղղորդում է ազդարարին՝ հաղորդումը ներկայացնել անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին: Իր հերթին, ՀՀ կառավարության 15.03.2018 թվականի N 272-Ն որոշմամբ սահմանվել է ներքին ազդարարման հաղորդումների հաշվառման և ձևակերպման համար պատասխանատու անձանց նշանակելու և վերջիններիս մասին աշխատողներին տեղեկացնելու պահանջ, **ինչը միջազգային ստանդարտների համաձայն, նույնը չէ,** ինչ ազդարարման ընթացակարգերի (channels), օրինակ՝ ներքին ազդարարումներ ներկայացնելու նպատակով ստեղծված հատուկ հեռախոսագծի, էլեկտրոնային փոստի կամ վեբ ձևի (web-form), ստեղծումը:

⁴¹ Օրինակ՝ <https://moj.am/page/594> , <https://www.prosecutor.am/staffs/101> , <https://www.prosecutor.am/staffs/100> , <https://www.gov.am/am/404/>

⁴² <https://www.ombuds.am/am/site/AboutTeamMembersInsight/61>

⁴³ Օրինակ՝ <https://moj.am/page/594> , https://www.supervision.am/internal_and_external_alarms/ , <https://moj.am/page/594> , https://www.mfa.am/hy/int_ext_re/

Մինևույն ժամանակ, Կառավարության հիշյալ որոշումը սահմանում է ազդարարների հաղորդումները հաշվառելու և ձևակերպելու ընթացակարգը, երբ դրանք ստանում են ազդարարման համար պատասխանատու անձինք: Մինչդեռ սահմանված չէ կարգավորում այն դեպքերի համար, երբ հաղորդումները ներկայացվում են անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի:

Աս հենանիշի ներքո՝ պետական մասնակցությամբ ձեռնարկությունների կարգավորումների մասին մանրամասն ներկայացված է «Մասնավոր ոլորտում ազդարարման համակարգի կատարելագործում» վերլուծության մեջ:

4. Ըստ ՏՀԶԿ, ԵՄ ստանդարտների և միջազգային փորձի՝ ներքին ազդարարման ընթացակարգերը պետք է հնարավորություն ընձեռեն ազդարարել **գրավոր, բանավոր կամ երկու ձևով էլ: Բանավոր** հաղորդման դեպքում, պետք է հնարավորություն լինի այն իրականացնել **հեռախոսով** (telephone) կամ **ձայնային հաղորդակցության այլ համակարգերով** (other voice messaging systems), ինչպես նաև հաղորդում ներկայացնող անձի պահանջով՝ ողջամիտ ժամկետում **առկա (դեմատոլեմ) հանդիպման** (physical meeting) միջոցով: Կան երկրներ, որտեղ ներդրված է **միասնական ազդարարման էլեկտրոնային հարթակը**, որին հասանելիություն ունեն ներքին ազդարարումները հաշվառող և քննող իրավասու մարմինները:

Անդրադառնալով Հայաստանին, հարկ է նշել, որ այստեղ նախատեսված է միայն **գրավոր կամ բանավոր հաղորդումների** ներկայացման եղանակը: Որևէ այլ եղանակ, այդ թվում՝ հեռախոսով, ձայնային հաղորդակցության կամ առկա հանդիպումների հնարավորություն նախատեսված չէ: Ավելին, Հայաստանում թեև գործում է ազդարարման միասնական հարթակը, սակայն այս հարթակով ներքին ազդարարումների ներկայացման **մեխանիզմ նախատեսված չէ:**

5. Ըստ ՏՀԶԿ, ԵՄ ստանդարտների և միջազգային փորձի՝ ներքին ազդարարման դեպքում նախատեսված է խորհրդատվության տրամադրման հնարավորություն ազդարարներին այն իրավասու մարմինների կամ պատասխանատու անձանց կողմից, որոնք ստացել են հաղորդումը:

Հայաստանում խորհրդատվական բնույթի գաղտնի խորհրդատվություն և իրավաբանական աջակցություն տրամադրում է ՄԻՊ-ը:

Գ) ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6. ՏՀԶԿ, ԵՄ ստանդարտների և միջազգային փորձի համաձայն՝ արտաքին հաղորդումներ ստանալու իրավասություններ կարող են ունենալ մեկ կամ մի քանի մարմիններ՝ ելնելով իրենց իրավասության շրջանակներից, սակայն այդ մարմինների ցանկը և իրավասության շրջանակը պետք է լինի հստակ սահմանված: Ի լրումն, ՏՀԶԿ-ի ստանդարտներին համապատասխան՝ **ազդարարման ոլորտում պատասխանատու իրավասու մարմինները պետք է համապատասխանեն ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի առնչությամբ սահմանված «Ազդարարների պաշտպանությունն ապահովելու համար պատասխանատու մարմին»** թեստին:

Հայաստանում **«իրավասու մարմին»** եզրույթը բավականին **ընդհանրական է սահմանված**: Այն վերաբերում է բոլոր պետական մարմիններին, ՏԻՄ-երին և պետական (հանրային) կազմակերպություններին: Նույն սահմանումը վերաբերում է նաև այն իրավասու մարմին, որոնք ստանում են արտաքին ազդարարումներ և ազդարարներին պաշտպանություն տրամադրելու կամ դրա հետ կապված դիմումներ: «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքից պարզ չէ, թե կոնկրետ ում պետք է ազդարարը դիմի արտաքին ազդարարման դեպքում և ումից կարող է պահանջել հատուկ պաշտպանություն, ումից կարող է ակնկալել հետադարձ կապ, ում կարող է դիմել խորհրդատվություն ստանալու նպատակով (ներկայում խորհրդատվություն տրամադրում է ՄԻՊ-ը, սակայն այս մասով արված վերլուծություններն ու առաջարկները մանրամասն ներկայացված են «Ազդարարման համակարգի հայկական մոդելի տեսլականը. Ազդարարման հարցերով պատասխանատու մարմինների դերերի հստակեցում և կենտրոնական մարմնի ձևավորում» փորձագիտական վերլուծության շրջանակներում):

Դ) ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7. ՏՀԶԿ ստանդարտներից է հաջորդը հետևյալն է՝ **«2.1 Հաղորդում ներկայացնելու հետևյալ ընթացակարգերը նախատեսված են օրենքով և գործում են պրակտիկայում՝ (C) Հանրությանը ազդարարելու հնարավորություն (լրատվամիջոցների կամ ինքնուրույն**

բացահայտման միջոցով, օրինակ՝ սոցիալական ցանցերում), (Թիվ 2 ինդիկատորի 2.1 (C) հենիանիշ):

ԵՄ ստանդարտի, ՏՀԶԿ և միջազգային փորձի համար՝ հանրությանն ազդարարում ներկայացրած անձը օգտվում է նախատեսված պաշտպանությունից, եթե

- a) անձը առաջին հաղորդումը ներկայացրել է ազդարարման մյուս տեսակներով՝ ներքին և արտաքին, կամ՝ անմիջապես արտաքին ընթացակարգով, սակայն հաղորդմանը նախատեսված կարգով և ժամկետներում ընթացք չի ստացել, կամ
- b) անձը բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ հաղորդումը կարող է **անմիջական կամ ակնհայտ վտանգ հանդիսանալ հանրային շահի համար, կամ առկա է արտաքին ազդարարումների դեպքում վնասակար գործողության վտանգի կամ հաղորդման արդյունավետ լուծման ցածր հեռանկար՝ ելնելով գործի առանձնահատուկ հանգամանքներից:**

Հայաստանում հանրությանն ազդարարումը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե ազդարարման մյուս տեսակներով հաղորդումը «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում ընթացք չի ստացել: Այս դեպքում ազդարարը կարող է հաղորդումը հայտնի դարձնել հանրությանը ՁԼՄ-ներով: Ի տարբերություն ՏՀԶԿ և ԵՄ ստանդարտների, այս դրույթը չի նախատեսում որևէ բացառություն, ընդհուպ այն դեպքերի համար, երբ կոռուպցիոն դեպքը կարող է անմիջական կամ ակնհայտ վտանգ ներկայացնել հանրության համար, կամ երբ առկա է ազդարարի հանդեպ վնասակար գործողության կատարման ռիսկ, կամ երբ առկա է արտաքին ազդարարման հաղորդում ներկայացնելու միջոցով խախտումը վերացնելու ցածր հավանականություն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով ազդարարման ոլորտում վարվող վիճակագրության վերաբերյալ մի կողմից, միջազգային ստանդարտների և առաջավոր, մասնավորապես՝ ՏՁՀԿ, ԵՄ և ԱԼԳ երկրների փորձը, մյուս կողմից, ներպետական օրենսդրության և պրակտիկայի վերլուծությունը՝ առաջարկվում է ՀՀ-ում կատարելագործել ազդարարման տեսակները ներքոշարադրված առաջարկությունների:

Ա) ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՑԹԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով ուղղակի կերպով նախատեսել, որ ազդարարը իրավունք ունի ընտրել՝ թե ազդարարման որ տեսակով (ներքին, թե՞ արտաքին) ներկայացնի ազդարարումը:
2. Իրավասու մարմինների կայքէջերում ունենալ հատուկ առանձնացված բաժիններ, որտեղ կներկայացվեն ներքին և արտաքին ազդարարման համար պատասխանատու ստորաբաժանման կամ պատասխանատու անձանց ամբողջական կոնտակտային տվյալները, ներառյալ՝ էլեկտրոնային և փոստային հասցեները, հեռախոսահամարները՝ նշելով, թե արդյոք հեռախոսային խոսակցությունները ձայնագրվում են, հաղորդումների հաշվառման համար կիրառելի ընթացակարգերը, այդ թվում նշելով, թե իրավասու մարմինը ինչպե՞ս և ի՞նչ տեսակի տեղեկատվություն կարող է պահանջել հաղորդում ներկայացրած անձից, ներառյալ՝ հաղորդած տեղեկատվության վերաբերյալ պարզաբանումների և լրացուցիչ տեղեկատվության տրամադրման անհրաժեշտությունը, հետադարձ կապի ապահովման ժամկետը, եղանակը և բովանդակությունը, տեղեկատվություն այն մասին, որտեղ հստակ ձևակերպված է այն դրույթը, ըստ որի գաղտնիության խախտման դեպքում հաղորդում ներկայացրած անձիք ազատվում են պատասխանատվություն կրելուց:
Մինևույն ժամանակ, նշված պարզաբանումները և տեղեկատվությունը պետք է հանրամատչելի կերպով ներկայացվեն, և ոչ թե զուտ մեջբերումներ օրենքից:

Բ) ՆԵՐՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

3. «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով հանրային (պետական) հատվածի կառույցների համար նախատեսել ներքին ազդարարման ընթացակարգեր ներդնել ուղիղ (անմիջական) պարտավորություն: ՀՀ կառավարության 15.03.2018 թվականի N 272-Ն որոշմամբ սահմանել ազդարարների հաղորդումները հաշվառելու և ձևակերպելու ընթացակարգ այն դեպքում, երբ դրանք ներկայացվել են անմիջական դեկլարարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի:
4. Ներքին ազդարարման ընթացակարգերում, ի լրումն՝ գրավոր և բանավոր հաղորդումների, նախատեսել հնարավորություն հաղորդումն իրականացնել հեռախոսով (telephone) կամ ձայնային հաղորդակցության այլ համակարգերով (other voice messaging systems), ինչպես նաև հաղորդում ներկայացնող անձի պահանջով՝ ողջամիտ ժամկետում առկա (դեմատոդեմ) հանդիպման (physical meeting) միջոցով: Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակով (azdararir.am) նախատեսել ներքին ազդարարման հնարավորություն՝ ինչպես անանուն, այնպես էլ անձնական տվյալները ներկայացնելու միջոցով: Այս դեպքում հարթակը պետք է ունենա երկու բաժին՝
 - a. հանրային ոլորտի ներքին ազդարարում, և
 - b. հանրային և մասնավոր ոլորտի արտաքին ազդարարում:Ներքին ազդարարման դեպքում հարթակում ապահովել օրենքով նախատեսված իրավասու մարմինների պատասխանատու անձանց մասնակի հասանելիությունը հարթակին՝ ստեղծելով անձնական գրասենյակներ՝ բացառապես իրենց մարմիններին առնչվող ներքին ազդարարումներ ստանալու նպատակով:
5. Նախատեսել ազդարարներին խորհրդատվական բնույթի գաղտնի խորհրդատվություն և իրավաբանական աջակցություն տրամադրման հնարավորությունը ՏՀԶԿ ստանդարտներին համապատասխան մարմնի կողմից «Ազդարարման համակարգի հայկական մոդելի տեսլականը. Ազդարարման հարցերով պատասխանատու մարմինների դերերի հստակեցում և կենտրոնական մարմնի ձևավորում» փորձագիտական վերլուծության շրջանակներում):

Գ) ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

6. Հստակեցնել արտաքին մարմինների ազդարարման դեպքում «իրավասու մարմին» եզրույթը և որպես արտաքին ազդարարման համար պատասխանատու մարմիններ սահմանել՝

- **ՀՀ գլխավոր դատախազություն**՝ որպես կոռուպցիոն դեպքերին առնչվող ազդարարումների պատասխանատու մարմին,
- **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով**՝ որպես շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումներին առնչվող ազդարարումների պատասխանատու մարմին,
- **Ոլորտային խախտումների համար պատասխանատու մարմիններ**, օրինակ՝
 - **ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը**՝ աշխատանքային իրավունքների և իրավասության ներքո գտնվող այլ բնագավառների խախտմանն առնչվող ազդարարումների մասով,
 - **Կրթության տեսչական մարմինը**՝ նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության, իր իրավասության ներքո գտնվող այլ բնագավառների խախտմանն առնչվող ազդարարումների մասով,
 - **Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը**՝ բնապահպանության, շրջակա միջավայրի, ընդերքի, հանքարդյունաբերության, բնական պաշարների ոլորտներում առկա խախտումներին առնչվող ազդարարումների մասով,
 - **Մանրամթերքի անվտանգության տեսչական մարմինը**՝ սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում առկա խախտումներին առնչվող ազդարարումների մասով,
 - **Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը**՝ պարենային արտադրանքի, թանկարժեք մետաղների և չափումների միասնականության ապահովման բնագավառներում առկա խախտումներին առնչվող ազդարարումների մասով,
 - **ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը**՝ հրդեհային, տեխնիկական և տրանսպորտային

անվտանգության, քաղաքաշինական, էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության, գեոդեզիայի և հողօգտագործման բնագավառներում առկա խախտումներին առնչվող ազդարարումների մասով,

- **Պետական եկամուտների կոմիտե**՝ հարկային և մաքսային ոլորտներում առկա խախտումներին առնչվող ազդարարումների մասով:

Այն դեպքում, երբ խախտումներին առնչվող ազդարարումները առներույթ գտնվում են ԿԿՀ-ի և/կամ ոլորտային մարմնի իրավասության ներքո, ազդարարումը կարող է ներկայացվել երկու մարմիններին: Այս դեպքում էլեկտրոնային միասնական հարթակում Գլխավոր դատախազությունը ստանալով ոչ կոռուպցիոն դեպքի վերաբերյալ հաղորդումներ, դրանք վերահասցեագրում են ԿԿՀ-ին: ԿԿՀ-ն ուսումնասիրելով ազդարարումը, եթե գտնում է, որ դրանք ենթակա են այլ ոլորտային մարմինների քննությանը, դրանք վերահասցեագրում է այդ մարմիններին՝ ապահովելով արտաքին ազդարարման վերահասցեագրման ընդհանուր կարգավորումները:

Դ) ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

7. Հանրությանն ազդարարումը նախատեսել ոչ թե ներքին և արտաքին ազդարարումներից հետո միայն, այլև հետևյալ հնարավորություն տալ ազդարարին կատարել սկզբնական ազդարարում (առանց սպառելու ներքին և արտաքին ազդարարները եղանակները), եթե՝
 - a. անձը բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ հաղորդումը կարող է անմիջական կամ ակնհայտ վտանգ հանդիսանալ հանրային շահի համար, կամ
 - b. ներքին և/կամ արտաքին ազդարարումների դեպքում առկա է վնասակար գործողության վտանգ կամ ազդարարի կամ նրա հետ փոխկապակցված անձի նկատմամբ կատարվել են վնասակար գործողություններ կանխելու ազդարարումը, կամ
 - c. առկա է հաղորդման արդյունավետ լուծման ցածր հեռանկար՝ էլնելով գործի առանձնահատուկ հանգամանքներից: